



ISSN 1829-2992

Ա Կ ՈՒ Ն Զ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(14)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Ա Կ Ո Ւ Ն Ք

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(14)

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

Գլխավոր խմբագիր՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Գրիշա Ալեքսանի Ղարիբյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հարություն Ալեքսանի Մարգարյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռաֆիկ Ասքանազի Նահապետյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ Գարեգինի Մինասյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Արշավիրի Առաքելյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հայկ Մկրտիչի Դերձյան – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հենգել Գերասիմի Մանուչարյան – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Աննա Գրիգորի Ասատրյան – արվեստագիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Պարզևի Մուրադյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեդա Քերոբի Գասպարյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեյրան Արտուշայի Զաքարյան – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Մելսիկ Պարզևի Մկրտումյան – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու / Խմբ.
խորհուրդ՝ Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա.
Ներսիսյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2016 թ. – 136 էջ:

YEREVAN STATE UNIVERSITY
—
IJEVAN BRANCH

A K U N Q

A COLLECTION OF EDUCATIONAL – METHODOLOGICAL
ARTICLES

NUMBER 2(14)

YEREVAN
—
YSU PUBLISHING_HOUSE
2016

Editor-in-chief

doctor of historical science, professor **ASHOT NERSISYAN**

Editorial council

Grisha Alexan Gharibyan – doctor of economic science, professor
associate member of NAS, RA

Rafik Askanaz Nahapetyan – doctor of historical science, professor

Edik Garegin Minasyan – doctor of historical science, professor

Samvel Arshavir Arakelyan – candidate of historical science, assistant
professor

Hayk Mkrtich Derdzian – doctor of law, professor

Henzel Gerasim Manucharyan – doctor of political science, professor

Anna Grigor Asatryan – doctor of art, professor

Samvel Pargev Muradyan – doctor of philological science, professor

Seda Kerob Gasparyan – doctor of philological science, professor

Seyran Artushai Zakaryan – doctor of philosophy science, professor

Melsik Pargev Mkrtumyan – doctor of psychological science, professor

Akunq. A collection of educational-methodological articles/Edit.
council G.A. Gharibyan and others; Editor-in-chief A.A.
Nersisyan. – Yer.: Ysu publishing-house, 2016 – 136 p.

Լ Ե Զ Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՆՑՅԱԼԻ ՀԻՄՔԻ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ՁԵՎԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոգվածում ներկայացվում են անցյալի հիմքի կազմությանն ու նրանից կազմվող ժամանակաձևերի վերջավորությունների ուսուցմանը վերաբերող հարցեր: Ձևաբանական համակարգում բայ թեման ուսուցման առումով որոշակի բարդություններ ունի, որովհետև թե՛ քերականական կարգերի և թե՛ ձևակազմության առանձնահատկությունների հարստությամբ տարբերվում է այլ խոսքի մասերից: Բայական համակարգի, մասնավորապես անցյալի հիմքի և նրանից կազմվող ժամանակաձևերի ուսուցման խնդիրը առավել բարդ է գրաբարում, որովհետև գրաբար լեզուն իր քերականական որոշ յուրահատկություններով էապես տարբերվում է արդի գրական հայերենից: Ուստի և ուսուցանվող նյութն առանձնահատուկ ուշադրությամբ և մանրամասնորեն պետք է բացատրվի՝ տեսական ասելիքը ամրապնդելով համապատասխան օրինակներով:

Բանալի բառեր. Անցյալի հիմք, արմատական հիմք, ցոյական հիմք, խոնարհման տիպեր, ներգործաձև խոնարհում, կրավորաձև խոնարհում, խառը խոնարհում, անցյալի վերջավորություններ, անցյալի հիմքի բացառություններ, պարզ բայերի հիմքակազմություն, սոսկածանցավոր բայերի հիմքակազմություն:

Հայերենի ձևաբանական համակարգում բայ խոսքի մասն առանձնանում է իր քերականական հատկանիշների առատությամբ: Ուսումնական ծրագրերում առավել մեծ ժամաքանակ հատկացվում է հենց այս խոսքի մասին: Բնականաբար, ուսուցման տեսանկյունից նույնպես առավել մեծ բարդություն ունի այս խոսքի մասը, քանի որ քննվում են տարբեր խնդիրներ, տարբեր առանձնահատկություններ, սակայն միմյանց փոխկապակցված, որոնց լիարժեք ընկալումից կախված է բայի հատկանիշների և քերականական յուրահատկությունների վերաբերյալ ամբողջական գիտելիքի ձևավորումը:

Բայական համակարգի ուսուցումն առավել բարդ է գրաբարում, քանի որ մեր լեզվի հին շրջանն իր քերականական առանձնահատկություններով բավական տարբերվում է արդի հայերենից: Հատկապես տարբեր է անցյալի հիմքի և նրանից ձևավորվող ժամանակաձևերի կազմությունը: Ի տարբերություն արդի հայերենի, որտեղ բայի համար առանձնացվում է երեք հիմք՝ ներկայի, անցյալի և դերբայական, գրաբարում առանձնացվում են երկու բայահիմքեր՝ ներկայի և անցյալի: Հատկանշական է, որ անցյալի հիմքն է կազմության առումով բարդություն ներկայացնում: Անցյալի հիմքը գրաբարում ունի երկու դրսևորում՝ արմատական և ցոյական: Այս երկու ձևերի հստակ իմացությունը և դրանց գործածության առանձնահատկությունների յուրացումը պարտադիր պայման են անցյալի հիմքից կազմվող ժամանակաձևերի խոնարհումը ճիշտ կատարելու համար: Ընդ որում, ներկայացվող նյութն ավելի ընկալելի դարձնելու համար հարկավոր է ուսանող-ներին ներգրավել դասի գործընթացի մեջ՝ երկխոսության, զրույցի, հարցադրումների միջոցով խթանելով նրանց մտածողությունը: Ուսանողների արձա-

գանքից, ինչպես նաև ներկայացվող նյութին համապատասխան նրանց բերած օրինակներից կարելի է եզրակացնել ընկալման արդյունքի մասին: Առավել արդյունավետ կլինի նյութը տեսականո-րեն բացատրելուց հետո բերել նաև սխեմաներ կամ գծագրեր, որոնք նյութի կարևորագույն, հանգուցային մասերը տեսողական առումով կամրապնդեն:

Եվ այսպես, անցյալի հիմքի կազմության բացատրությունն սկսում ենք արմատական հիմքերից: Արմատական հիմքերի վերաբերյալ պետք է իմանալ հետևյալը. արմատական հիմքը համընկնում է բայարմատին: Նախ և առաջ այսպիսի հիմք ունեն **ու** լծորդության պատկանող բոլոր բայերն անխտիր (եթե, իհարկե, բացառություն չեն), ինչպես՝ հեղուկ, թողուկ, արգելուկ, հեղձնուկ, ջեռնուկ, առնուկ և այլն: Վերջին երեք բայերը սոսկածանցա-վոր են: Դրանց կազմության մեջ առկա **ն** սոսկածանցը ևս դուրս է ընկնում, և անցյալի հիմքում մնում են միայն բայական արմատները՝ **հեղձ, ջեռ, առ**: Այնուհետև արմատական հիմք ունեն նաև **ե** և **ի** լծորդության սոսկածանցավոր բայերը, ինչպես՝ մտանել-մտ (անհնչյունափոխ՝ մուտ), իջանել-իջ (էջ), տեսանել-տես, հարցանել-հարց, ելանել-ել (**ե** լծորդություն), ագանել-ագ, ուսանել-ուս, անկանել-անկ, բուսանել-բուս, փախչել-փախ, թռչել-թռ, մարտնչել-մարտ, երկնչել-երկ (**ի** լծորդություն) և այլն: Առավել ամրապնդելու համար արմատական հիմքերի վերաբերյալ ասվածը հարկավոր է բերել **ե, ի** և **ու** լծորդությունների պատկանող բայերի առանձին շարքեր և ուսանողներին հանձնարարել որոշել դրանց անցյալի հիմքերը:

Ինչպես նախապես նշեցինք, անցյալի հիմքն ունի նաև ցոյական կառուցվածք: Ցոյական հիմքը ենթադրում է **սց** կամ **եց** բաղադրիչի առկայություն բայարմատին կից: Հարկավոր է ուսանողներին բացատրել, թե որ բայերն են ստանում **սց**, որ բայերը՝ **եց**:

Նախ պետք է նշել, որ **ս** լծորդության բոլոր բայերն ունեն ցոյական հիմքեր. սրանցում արմատական հիմքեր ունեցողներ չկան: Այնուհետև դիտարկում ենք պարզ կազմության բայերն առանձին, ածանցավորներն առանձին: Պարզ կազմության բայերում անցյալի հիմքը ստանալու համար հանում ենք բայական **սլ** վերջավորությունը՝ փոխարենը բա-յարմատի վրա դնելով **սց**, օրինակ՝ մնալ-մն+աց-մնաց, զգալ-զգ+աց-զգաց, ամալ-ամ+աց-ամաց, դողալ-դող+աց-դողաց և այլն: **Սն** սոսկածանց ունեցող բայերում սոսկածանցը հանում ենք՝ դրա փոխարենն դնելով **սց** բայական բաղադրիչ: Օրինակ՝ ստանալ-ստ+աց-ստաց, խոստանալ-խոստ+աց-խոստաց, զարմանալ-զարմ+աց-զարմաց, գոհանալ-գոհ+աց-գոհաց և այլն: **Են** սոսկածանց ունեցող բայերում հանում ենք նշված սոսկածան-ցը՝ փոխարենը դնելով **եց** բայական բաղադրիչ: Այսպես՝ յամենալ-յամ+եց-յամեց, յագե-նալ-յագ+եց-յագեց, մերձենալ-մերձ+եց-մերձեց: Բացատրությունից հետո բերում ենք **ս** լծորդության պարզ և սոսկածանցավոր բայերի շարքեր և ուսանողների հետ որոշում դրանց անցյալի հիմքերը:


Անցյալում ցոյական հիմքեր ունեն նաև **ե** և **ի** լծորդությունների պարզ բայերը (որոշ բացառություններ կան նաև այս բայերում, որոնք հարկավոր է առանձին ներկայացնել): Դրանց անցյալի հիմքերը կազմելու համար հանում ենք բայական **ել** վերջավորությունը և դրա փոխարենն դնում **եց** բայական բաղադրիչ (այս բաղադրիչի անհնչյունափոխ տարբերակն է **եաց**, որը կիրառվում է **ե** լծորդության բայերի անցյալ կատարյալի եզակի III դեմքում և բուն հրամայականի եզա-

կին կազմելիս): Օրինակ՝ կոչել-կոչ+եց-կոչեց, կազմել-կազմ+եց-կազմեց, պարզել-պարզ+եց-պարզեց, պատմել-պատմ+եց-պատմեց, անխայել-անխայ+եց-անխայեց (**է** լծորդություն), հայել-հայ+եց-հայեց, կամել-կամ+եց-կամեց, խոր-հել-խորհ+եց-խորհեց, հանդերձել-հանդերձ+եց-հանդերձեց (**հ** լծորդություն) և այլն: Այ-նու-հետև բերում ենք **է** և **հ** լծորդությունների բայերի շարքեր և ուսանողների հետ ուրոշում դրանց անցյալի բայական հիմքերը:

Թեև պատճառական բայերի խոնարհումն ուսումնասիրվում է որպես առանձին թեմա և առանձին ժամաքանակով, սակայն անցյալի հիմքը բացատրելիս հնարավոր չէ դրանց անցյալի հիմքակազմությանը չանդրադառնալ, քանի որ ընդհանուր պատկերը թերի կլի-նի:

Պատճառական բայերն անցյալում ևս ունեն ցոյական հիմքեր, սակայն **ոյց** բաղադրիչով ձևավորված: Ինչպե՞ս ենք ստանում այդ հիմքը: Պատճառական բայերն անորոշում ունեն **ուցան** ածանց, որը կազմությամբ բաղադրյալ ածանց է՝ կազմված բուն պատճառական ուց (անհնչյունափոխ՝ ոյց) ածանցից և **ան** սոսկաձանցից: Անցյալի հիմքում այդ **ան** սոսկաձանցը դուրս է ընկնում և մնում է բուն պատճառական ածանցը, ինչպես՝ մատուցանել-մատույց, հասուցանել-հատույց, ուսուցանել-ուսույց, թռուցանել-թռույց, փախուցանել-փախույց և այլն:

Անցյալի բայահիմքի կազմության վերաբերյալ բացատրությունը կարելի է ամփոփել սխեմայի միջոցով.



Անցյալի հիմքակազմության հիմնական օրինաչափությունների մանրամասն բացատրությունից հետո հարկավոր է առանձին ներկայացնել նաև ընդհանուր կանոնից շեղումները կամ բացառությունները, որոնք մասնավոր իրողություններ են, սակայն վերաբերում են բոլոր չորս լծորդություններին: Այսպես՝ **է** լծորդության հինգ պարզ բայեր ստանում են ոչ թե **եց**, այլ **աց** բայական բաղադրիչներ՝ ասել-ասաց, գիտել-գիտաց, կա-րել-կարաց, մարթել-մարթաց, մերկել-

մերկաց: **Ա** լծորդության երկու բայեր անցյալի հիմք են կազմում **ռն // րձ** հերթագայությամբ՝ բառնալ-բարձ, դառնալ-դարձ, երկու այլ բայերում էլ սոսկածանցի փոխարեն դրվում է ցոյական բաղադրիչը, որի լծորդ հնչյունը նույնանում է բայարմատի ձայնավորին՝ բանալ-բաց, թանալ-թաց: **Ի** լծորդության երկու պարզ բայեր ցոյականի փոխարեն հանդես են գալիս արմատական հիմքերով՝ նստել-նիստ, զգածել-զգած: **Ու** լծորդության վեց բայեր ունեն ցոյական հիմքեր՝ յենուլ-յեց, ըն-թենուլ-ընթերց, ընկենուլ-ընկեց, զգելուլ-զգեց, լնուլ-լից, խնուլ-խից:

Անցյալի հիմքի կազմության բացատրությունը և վերլուծությունը առաջին կարևոր, բայց ոչ միակ պայմանն են այս հիմքից կազմվող ժամանակաձևերով խոնարհումը ճիշտ կատարելու համար: Խիստ կարևոր է նաև իմանալ այն, թե ինչպիսի վերջավորություն է հարկավոր ավելացնել յուրաքանչյուր բայահիմքի, որպեսզի ճիշտ բայաձև ստացվի: Խնդիրը բարդանում է նրանով, որ գրաբարում գործում են երեք տիպի վերջավորություններ՝ ներգործաձև, կրավորաձև և խառը: Այս վերջավորությունների անվանումները երբեմն շփոթության մեջ են զցում ուսանողներին, սակայն նշենք, որ դրանք ոչ մի կապ չունեն բայի սեռերի հետ: Հարցն այն է, որ ուսանողը պետք է նաև հստակ պատկերացում ունենա, թե չորս լծորդությունների պարզ և ածանցավոր բայերն ինչ տիպի վերջավորություններ պիտի ստանան անցյալի հիմքից կազմվող ձևերում:

Այսպես՝ **է** լծորդության բոլոր բայերը, անկախ կազմությունից, ստանում են ներգործաձև վերջավորություններ: Դրանցից այն բայերը, որոնք ներգործական սեռի են, կրավորա-կան նշանակությամբ գործածվելիս ստանում են կրավորաձև վերջավորություններ: Օրինակ՝ **կազմեցի** խոնարհված է ներգործաձև, նշանակում է **պատրաստեցի, կազմեցայ** խոնարհված է կրավորաձև, նշանակում է **պատրաստվեցի**:


Ա և **ու** լծորդությունների պարզ կազմության բայերը ևս խոնարհվում են ներգործաձև: Դրանցից այն բայերը, որոնք ներգործական սեռի են և խոսքում պիտի արտահայտեն կրավորական նշանակություն, ստանում են կրավորաձև վերջավորություններ: Օրինակ՝ **արգելուլ** բայի անցյալ կատարյալն է **արգելի**, որ նշանակում է **փակեցի**, իսկ կրավորա-կան նշանակությամբ՝ **արգելայ փակվեցի**: Նույն կերպ՝ **որսաց** ներգործաձև խոնարհումը ներգործական նշանակություն է արտահայտում, **որսացաւ** կրավորաձև խոնարհումը՝ կրավորական:

Ա լծորդության սոսկածանցավոր բայերը (մի քանի բացառությունները հանած) կրավորաձև խոնարհում ունեն՝ անկախ սեռից: Այսպես՝ **ստանալ, գողանալ, մոռանալ, իմանալ** բայերը ներգործական սեռի են, **զարմանալ, մերձենալ, բարկանալ** բայերը չեզոք սեռի են, սակայն բոլորն էլ խոնարհվում են կրավորաձև՝ **ստացայ, իմացայ, բարկացայ** և այլն: Նշված բայերից ներգործական սեռ ունեցողները կրավորական նշանակությունն արտահայտում են նույն վերջավորություններով՝ նախադասության մեջ, այսինքն՝ շարահյուսական մակարդակում:

Ու լծորդության **ն** սոսկածանց ունեցող բայերը ևս (չհաշված մի քանի բայեր, որոնք բացառություններ են և այն բայերը, որոնք **ի** լծորդության մեջ փոխանցումներ ունեն) ստանում են կրավորաձև վերջավորություններ՝ անկախ բայական սեռից: Օրինակ՝ **հեծ-նուլ-հեծայ, ջենոնուլ-ջեռայ, զբոսնուլ-զբոսայ**:

Ի լծորդության պարզ և **ան** սոսկաձանց ունեցող բոլոր բայերը ստանում են կրավորաձև վերջավորություններ: Օրինակ՝ խօսել-խօսեցայ, կամել-կամեցայ, բազմել-բազմեցայ, դե-գերել-դեգերեցայ, հաւանել-հավանեցայ (պարզ), ուսանել-ուսայ, ագանել-ագայ, շիջանել-շիջայ, սկսանել-սկսայ (աձանցավոր):

Ի լծորդության **չ** և **նչ** աձանց ունեցող, ինչպես նաև **ու** լծորդության փոխանցում ունեցող բայերն առանց բացառության անցյալի հիմքից կազմություններում ստանում են խառը տիպի վերջավորություններ: Նախ և առաջ հարկավոր է ուսանողներին ներկայացնել այն բայերը, որոնք փոխանցումներ ունեն: Փոխանցում ունենալը նշանակում է, որ այդ բայերը կան նաև **ի** լծորդության մեջ՝ **չ** կամ **ան** աձանցով: Դրանք են՝ զարթնուլ, ուստնուլ, ցաս-նուլ, քաղցնուլ, պակնուլ, պշնուլ, մածնուլ, խափնուլ, սարսոնուլ, շրտնուլ և այլն: Նշված բայերին, ինչպես նաև **ի** լծորդության **չ** և **նչ** աձանց ունեցող բայերին հավելվում են խառը տիպի վերջավորություններ, ինչպես՝ զարթնուլ-զարթեայ, ուստնուլ-ուստեայ, ցասնուլ-ցասեայ, քաղցնուլ-քաղցեայ, մածնուլ-մածեայ, թոչել-թոեայ, փախչել-փախեայ, հանգչել-հանգեայ, մարտնչել-մարտեայ, կորնչել-կորեայ և այլն: Ասվածը կարելի է ներկայացնել նաև սխեմայի միջոցով.



Այնուհետև հարկավոր է ներկայացնել նաև խոնարհման վերջավորություններում բացառություններ ունեցող բայերն ըստ բայական լծորդությունների, որպեսզի քննարկվող խնդիրների վերաբերյալ ուսանողների պատկերացումն ամբողջական լինի:

Խոնարհման համակարգին վերաբերող այս երկու իրողությունները երևի ամենաբարդ խնդիրն են ուսանողների կողմից յուրացման տեսանկյունից, ուստի և դրանց հիմնավոր բացատրությունն ու հնարավորինս մանրամասն վերլուծությունը կարևոր պայման են նյութի ընկալման և յուրացման, ինչպես նաև անցյալի հիմքից կազմվող ժամանակաձևներով ճիշտ խոնարհում կատարելու համար:

Карине Погосян-Обучение основе прошедшего времени и образующимся от неи формам. В статье представлены вопросы обучения структуры основы прошедшего времени и окончаний времен, которые образуются от неи. В морфологической системе тема глагола имеет некоторые трудности в сфере обучения, поскольку она отличается от других частей речи богатством грамматических категорий и своеобразием формообразования. Проблема обучения глагольной системе, в частности основе прошедшего времени и форм, образующихся от неи, сложнее в грабаре, так как грабар существенно отличается от современного армянского языка некоторыми грамматическими особенностями. Следовательно, обучаемый материал должен объясняться подробно и с особым вниманием, закрепляя теоретический материал соответствующими примерами.

Karine Poghosyan- The Teaching of the Stem of the Past Tense and Its Forms in Grabar (Old Armenian). The questions about teaching of the structure of the stem of the past tenses and their endings are represented in this article. The topic of verb has some difficulties in teaching area in morphological systems because it differs from other parts of speech by richness of grammatical categories and singularity of morphogenesis. The teaching problem of verb system, particularly the stem of past tenses is much more difficult in Grabar because it greatly differs from modern Armenian by some grammatical features. Therefore teaching material must be particularly explained and confirmed with appropriate examples.

ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆՈՒՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

ՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գնահատում տերմինը սահմանվում է որպես տեղեկությունների ձեռք բերման գործընթաց, որն օգտագործվում է սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, ինչպես նաև՝ կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելու համար¹: Դասավանդումն ու գնահատումը փոխադարձաբար կապված են միմյանց: Դասավանդողը պետք է կարողանա գնահատման եղանակները համապատասխանեցնել ուսուցման մեթոդներին, մշակել գնահատման մեթոդներն ու հիմնավորել ստացված արդյունքները: Սովորողները պետք է հասկանան, որ իրենք են պատասխանատու իրենց ուսումնառության համար, և գնահատումն իրենց առաջընթացի մասին տեղեկատվություն է, որը կարելի է օգտագործել այն բարելավելու համար:

Հոդվածում քննարկվում է գնահատման կարևորությունը օտար լեզվի դասավանդման գործընթացում, ներկայացվում են գնահատման մի քանի մեթոդներ, գնահատման սանդղակների մշակման մի քանի սկզբունքներ:

Բանալի բառեր. մանկավարժություն, օտար լեզվի դասավանդման մեթոդիկա, գնահատում

Դասավանդողի կողմից սովորողի գործունեությունը գնահատելը իրենից ներկայացնում է նախապես պլանավորված աշխատանքի և նրա հետագա առաջընթացի հանրագումար:

Մասնագիտական կրթության նախապատրաստության ընթացքում սկսնակ դասավանդողը չի ստանում գնահատման վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ: Նրան կողմնորոշող միակ մոդելն այն մոդելն է, որով ինքը, որպես աշակերտ, գնահատվել է դպրոցում: Այն կամ հիշեցնում է անողորմ դատավճիռ, որով պատժվում է, այսպես կոչված, օրինախախտը՝ լեզվաբանական կողեքսի կանոնները խախտելու համար: Կամ հիշեցնում է հաղթողի դափնի, որը, որպես պարգև, տրվում է համառության, համարձակության, երևակայության, ինչու չէ, նաև հնազանդության համար: Հաճախ գնահատման գործողությունը առաջ է բերում տարածայնություններ ուսուցման գործընթացի երկու կողմերի՝ գնահատողի և գնահատվողի միջև: Գնահատվողը դժգոհ իր գնահատականից, բողոքում է և պահանջում բացատրություններ: Մյուս կողմից, կրթական հաստատությունը, հիմք ընդունելով սովորողների առաջադիմությունը, իր գնահատականն է նշանակում գնահատողին՝ վատ է համարվում այն ուսուցիչը, ում աշակերտները վատ գիտելիքներ ունեն: Գնահատում է նաև հասարակությունը՝ վատ գնահատականներ ունեցողը տեղ չունի աշխատաշուկայում:

Ուստի, անհրաժեշտ է ուսումնասիրել գիտելիքների գնահատման ձևաչափը և նրա հետևանքները, ձևավորել այնպիսի փոխհարաբերություններ մեր և սովորողների միջև, որոնք վերացնում են տարածայնությունները և նպաստում

¹ Մ. Վարդումյան, Ն. Ջաղինյան և ուրշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, Ե., 2005, էջ 278:

մանկավարժական կապի ու համագործակցության բարելավմանը: Որոշ կրթական համակարգեր պարզապես հրաժարվել են գնահատականից՝ այս կերպ վերացնելով ուսուցումը /ուսումնառությունը սահմանափակող գործոնը: Այնուամենայնիվ, շատ կարևոր է, որպեսզի սովորողը կարողանա ինքն իրեն գնահատել, մի կարողություն, որը ձեռք է բերվում ուսումնառության ընթացքում:

Մեծ է դասավանդողի դերը՝ սովորողին գնահատման գործընթացի հետ կապելու գործընթացում: Նա պարտավոր է սովորեցնել նրան հասկանալու խնդիրը, դուրս գալու ավանդական կրթության կողմից սահմանված ենթակայի իր կարգավիճակից և իր ձեռքը վերցնելու սեփական ուսումնառությունը: Այս առումով մենք կիսում ենք Ժերար դե Վեչիի տեսակետը.

«Որպեսզի գնահատումը իսկապես օգնի աշակերտին սովորել, անհրաժեշտ է, որ նա մասնակցի իր ինքնուրույնության կայացմանը: Կարևոր է, որ ուսումնառության գործընթացի մեջ յուրաքանչյուր աշակերտ դառնա մասնակից կողմ, անհրաժեշտ է, որ նա հասկանա, թե ինչու է նա այդ աշխատանքը կատարում: Նա պետք է կարողանա ինքնուրույնաբար գնահատել իր աշխատանքը, ինչպես ուսուցիչը: Եթե նա միայն կարողանում է կատարել ուսուցչի պահանջները, ապա դա չի խթանում նրա ինքնուրույնությանը, ճիշտ հակառակը, ուսուցչի իշխանությունը մեծանում է, իսկ աշակերտը հայտնվում է մի կարգավիճակում, երբ հաջողության հասնելու համար պետք է միայն հնազանդվել»¹:

Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեն ինքնագնահատման հարցաթերթիկները, որոնք հնարավորություն են տալիս սովորողին գնահատելու սեփական առաջադիմությունը: Ահա դասավանդողի կողմից մշակված հարցաթերթիկի մի նմուշ, որին պետք է գրավոր պատասխանել :

Նպատակը՝ *Savoir s'y prendre pour inviter quelqu'un (Անհրաժեշտ գիտելիքներ՝ մեկին հրավիրելու համար)*

Je suis capable de: (Ես կարող եմ)

1. saluer mon interlocuteur (բարևել իմ խոսակցին)
2. utiliser les formules de politesse (օգտագործել քաղաքավարության կանոնները)
3. formuler une invitation et demander une réponse à mon interlocuteur (ձևակերպել հրավեր և պատասխան խնդրել իմ զրուցակցից)
4. réitérer l'invitation en trouvant des arguments plus forts et pertinents (կրկնել հրավերը՝ գտնելով ավելի ամուր և համոզիչ փաստարկներ)
5. exprimer le regret dans le cas d'un refus (մերժման դեպքում արտահայտել ավստասանք)
6. prendre congé (հրաժեշտ տալ)

Այնուհետև, սովորողի գիտելիքները գնահատում է դասավանդողը՝ յուրացրել է, յուրացման ընթացքում է, չի յուրացրել :

Ինքնագնահատման առավելություններն անվիճելի են. այն ստիպում է սովորողին մտածել, մարզում է դատողությունը, հնարավորություն է տալիս ինքնավստահություն ձեռք բերել և նպաստում է անհատի զարգացմանը՝ խրախուսել:

¹ **Gérard de Vecchi**, *Aider les élèves à apprendre*, Éditions Hachette, 1992, p.86.

լով նրան իր ձեռքը վերցնել սեփական ուսումնառության գործընթացը: Ավելին, այն նպաստում է նաև դասավանդողի և սովորողների փոխհարաբերությունների սերտացմանը:

Լեզվական գիտելիքների գնահատման առումով հետազոտողները տարբերակում են ստուգման կուտակային (կումուլյատիվ) և ձևավորող (ֆորմատիվ) գնահատումները: Չպետք է անտեսել նաև նախնական գնահատումը, որը իրականացվում է դասավանդման սկզբում՝ ուսուցման ավելի բարձր մակարդակի անցնելիս կամ նոր թեմա սկսելիս: Այն օգնում է բացահայտել սովորողների խմբի լեզվական ունակությունների մակարդակը, ինչպես նաև գիտելիքների միատարրության աստիճանը՝ մանկավարժական համապատասխան մարտավարություն մշակելու նպատակով:

Ուսուցման որևէ փուլի ավարտին կատարվող կումուլյատիվ գնահատումը հնարավորություն չի տալիս ոչ գնահատել նախորդ գործունեությունը, ոչ կանխագուշակել հետագա գործընթացը: Ստուգել նշանակում է ճշտել սովորողի լեզվական հաջողությունների համապատասխանությունը ուսումնասիրվող լեզվի նորմերին: Այդ նպատակով կիրառվում են թեստեր, ստուգաթղթեր, ստուգողական վարժություններ, քննություններ, որոնց հանրագումարը տալիս է գնահատականը: Այս տեսակի գնահատումն ավելի հաճախ պարտադրվում է ուսումնական հաստատության կողմից և կիրառվում՝ համեմատելու և դասակարգելու համար սովորողների հաջողությունները, անտեսելով ուսուցման/ուսումնառության գործընթացում ներգրավված անհատին: «Կիրառելով միայն այս տեսակի գնահատում, երիտասարդ հոգիները վտանգված են փշրվելու, գրտնակվելու ակադեմիզմի ճնշող գրտնակի տակ»¹:

Բարեբախտաբար, դասավանդողն ունի նաև շարունակական կամ ձևավորող գնահատման գործիք, որն, անկասկած, ավելի արդյունավետ է, քանի որ ուղեկցում է սովորողին ուսումնառության ամբողջ գործընթացում և փուլ առ փուլ չափում նրա հաջողությունները, զարգացնում նրա ինքնագնահատման կարողությունը: Ինքնագնահատման հարցաթերթիկները, թեստերը, ստուգողական վարժությունները, թղթապանակները այն գործիքներն են, որոնք հնարավորություն է տալիս պարզել սովորողի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները: Գնահատման այս տեսակն ապահովում է հետադարձ կապն ուսուցման գործընթացում: Հետադարձ կապը մեկնաբանությունների և վերլուծությունների միջոցով հանգեցնում է դասավանդման ընթացքում առաջացած թերությունների շտկմանը: Սովորողը համեմատվում է ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը, ուսումնառության դինամիկան, այլ կերպ ասած՝ որտեղից ուր է հասել ուսումնառության ընթացքում: Ուսուցանող-ձևավորող գնահատման արդյունքների հիման վրա էլ դասավանդողը կատարում է տվյալ իրավիճակից բխող փոփոխություններ:

Հետազոտողները դասավանդողներին են տրամադրել գնահատման ավելի օբյեկտիվ, ոչ ավանդական գործիքներ, ինչպիսիք են թեստերը: Գնահատման այս միջոցի առավելությունը կայանում է նրանում, որ ապահովում են լրացուցիչ օբյեկտիվություն, խիստ գիտականություն, ինչպես նաև՝ աշխատանքի պարզեցում:

¹ *N.H Kleinbaum, Le Cercle des portes disparus, Éditions Michel Lafon, 1990, p.5.*

Հարցերը կազմվում են այնպես, որպեսզի չլինեն ընդունելի մի շարք պատասխաններ, «վտարվի ամեն տեսակ դատողություն»¹ և պահպանվի համառոտության չափանիշը: Միևնույն ժամանակ, նրանց գործածությունը հնարավորություն է տալիս նվազեցնել կեղծելու վտանգը և տնտեսել ժամանակը՝ օգտագործելով ուղղումների սանդղակը կամ պատասխանները:

Թեստերի մշակումը մի քանի փուլանի գործընթաց է: Անհրաժեշտ է՝

- սահմանել թեստերի նպատակները
- պատրաստել հարցերը
- որոշել պատասխանների տեխնիկան
- դասավորել հարցերը
- մշակել կանոնները
- կազմել պատասխանների ձևաթուղթը
- նախափորձարկել
- որոշել սանդղակը
- ճշտել աշխատաժամանակը

Բացի այդ, պետք է հստակ սահմանել այն նպատակները, որոնք բարելավում են դասավանդումը և մշակել թեստավորման այնպիսի ծրագիր, որը կարողարացնի սովորողների սպասումները: Աշխատանքը հեշտացնելու նպատակով բոլոր լեզվական կոմպետենցիաները պետք է բաժանել ենթակոմպետենցիաների՝ բանավոր և գրավոր ընթերցում (*compréhension orale et écrite*), բանավոր և գրավոր խոսք (*expression orale et écrite*)⁴:

Նկատի ունենալով լեզվական գիտելիքների և հաղորդակցության տարրական փորձի սակավությունը՝ սկսնակների դասարանում դասավանդողը կարող է գնահատել խոսքային չորս կարողություններից միայն մեկի կամ լեզվաբանական վերլուծության միայն մեկ բաղադրիչի յուրացումը. բառապաշար, քերականություն, արտասանություն, ուղղագրություն: Այս մակարդակում պետք է կիրառել շատ կարճ թեստեր, որոնք մատչելի են, քանի որ դրանք նպատակ ունեն խրախուսել սովորողին, նպաստավոր պայմաններ ստեղծել նոր լեզվի ուսումնառության համար:

Միջին մակարդակում, առաջին փուլի ավարտից հետո, իրավիճակային երկխոսությունների միջոցով գնահատվում են սովորողի հմտությունները՝ պատասխանելու հետևյալ խոսքային գործողություններին. ներկայանալ, հրավիրել, մատուցել, հրաժարվել, համաձայնել, առաջարկել, շնորհավորել, հաճոյախոսել և այլն: Երկխոսությունը արտացոլում է նաև սովորողների լեզվական կարողությունների և բաղադրիչների յուրացման մակարդակը, քերականական որոշ կատեգորիաների և որոշակի բառապաշարի գործածության պայմաններում՝ Կայարանում-Հեռախոսի մոտ-Գնումներ կատարելիս – Ճամփորդական գործակալությունում և այլն: Ստացած գիտելիքների ամրապնդումն իրականացվում է կարճ թեստերի միջոցով, որոնք ընդգրկում են դասընթացի մի փոքրիկ միավորը:

Բոլոր դասավանդողները, մեթոդիստները և սովորողները համաձայն են նրանում, որ ներկայումս օտար լեզվի ուսուցման կարևորագույն նպատակը անհրաժեշտ կոմպետենցիաների ձեռք բերումն է՝ լեզվական փոխանակումների և

¹ *Jean-Claude Mothe, L'invalidation par les tests dans la classe de français*, Hachette, Larousse, 1975, p.12.

հաղորդակցության նպատակով: Գնահատման գործողությունը նպատակաուղղված է ստուգելու, թե ինչ չափով սովորողը կարող է կամ կկարողանա օգտագործել յուրացրած լեզվական գիտելիքները հաղորդակցության մեջ, իրական իրավիճակներում:

Օտար լեզու դասավանդողի աշխատանքը դժվար է մի քանի տեսանկյունից: Նախ նա պարտավոր է բանավոր և գրավոր խոսքը գնահատել՝ ելնելով լեզվի քերականական կանոնների (բայական ձևեր - հարակատար դերբայի, ածականի համաձայնություն գոյականի հետ - ժամանակների համաձայնություն - շարահյուսական կառուցվածքներ, համադասական և ստորադասական կապեր - բառապաշարի համապատասխանություն) և ուղղագրության ճիշտ գործածությունից, ինչպես նաև մտքի ինքնատիպությունից: Դասավանդողը պետք է իր գնահատման մարտավարությունը համապատասխանեցնի սովորողի տարիքի հետ: Տարրական մակարդակում, օրինակ պետք է հատկապես խթանել բանավոր հաղորդակցությունը, չմոռանալով գրավորը, քանի որ ակնհայտ է, որ սկսնակը չի կարող արտահայտվել անթերի, առանց սխալների:

Բանավոր և գրավոր գնահատման սանդղակները կամ սյունակաշարերը հնարավորություն են տալիս պարզելու, թե սովորողը

- որքանով զիտի թեմատիկ նյութը, բառապաշարը, քերականությունն ու ուղղագրությունը,

- որքանով է կարողանում որոշակի առաջադրանքներ կատարելիս գործադրել անհրաժեշտ խոսքային կարողություններ ու հմտություններ:

Սանդղակը կազմվում է այնպես, որպեսզի սովորողն առաջադրանքը կատարելու արդյունքում ստանա որոշակի տեղեկություններ իր ուսումնառության մասին: Սանդղակը հստակ պատկերացում է տալիս տվյալ գնահատականի համար պահանջվող աշխատանքի մակարդակի մասին, մատնանշում է թերություններ, որոնք կարելի է վերացնել, օգնում է լավ յուրացված գիտելիքները տարբերել թերի գիտելիքներից: Սյունակաշարեր կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

- Նշել, թե աշակերտի աշխատանքը ինչպես է գնահատվելու:

- Թվարկել և հստակ նկարագրել դիտարկման ենթակա կարողությունները, հմտությունները կամ աշխատանքի վերջնաարդյունքները:

- Ընտրել հստակ չափանիշներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի խուսափել չիմնավորված եզրակացություններից կամ սուբյեկտիվ դատողություններից:

- Հստակ ներկայացնել աշխատանքից ակնկալվող արդյունքները, որոնք իրատեսական և արդարացի կհամարվեն սովորողների կողմից:

- Նախապես մշակված սանդղակը ներկայացնել սովորողներին առաջադրանքը կատարելուց առաջ:

Սյունակաշարերի ցանկացած տեսակ մշակելիս անհրաժեշտ է կազմել տարբեր բարդության առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների պատրաստվածության մակարդակը: Որպես բանավոր և գրավոր առաջադրանքների գնահատման սանդղակների օրինակներ՝ առաջարկում ենք օգտագործել մեր ժո-

դովաճուն¹, որտեղ ներկայացված են նաև թեստային առաջադրանքների բազմա-
զան նմուշներ:

Мира Карапетян-Оценка в процессе преподавания иностранного языка.-
Термин оценка определяется, как процесс приобретения информации, который
используется для принятия решений в обучении, учебных программах, а также в
политике образования. Преподавание и оценка взаимосвязаны друг с другом.
Преподаватель должен найти соответствие между способами и оценки и методами
обучения, разработать методы оценки и обосновать полученные результаты.
Учащиеся должны понять, что они сами ответственны за своё обучение, и оценка –
это информация об их успехах, которую можно использовать с целью повышения
уровня знаний. В статье обсуждается важность оценивания в процессе обучения
иностранному языку, представлены некоторые методы оценки и несколько
принципов разработки шкалы оценок.

**Myra Karapetyan-The assessment of linguistic abilities in foreign language
teaching.**-The term assessment is defined as a process of gaining information which is
used in taking decisions about the education of the learners, the educational programs
and plans as well as about the educational policy. Teaching and assessment are mutually
correlated. The instructor should be able to make the methods of assessment correspond
to the methods of teaching, should be able to process the methods of assessing and to
substantiate the gained results. The learners should realize that they are responsible for
their education and the assessment on their progress is the information which can be
used to improve their education.

The present article touches upon the significance of assessment in foreign
language teaching. There are presented several methods, several principles of
assessment scales.

¹ **Կ. Գրիգորյան, Մ. Կարապետյան և ուրշներ**, Ֆրանսերեն ընթացիկ գնահատման առաջադրանքների
նմուշների ժողովածու, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Ե., 2008, էջ 11-12:

ԳՐԱԲԱՐԻ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՑԱՆ

Հոդվածում ներկայացված է գրաբարի ցուցական դերանունների հոլովման և գործածության ուսուցումը: Քերականական նյութի ընկալման գործընթացը և թեմայի վերաբերյալ տեղեկատվությունը իրականացվում է բացատրությամբ, ԽԻԿ համակարգով (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում)՝ կիրառելով ուսուցման ժամանակակից մեթոդներ: Սովորողների ճանաչողական և հաղորդակցական հմտությունների, կարողությունների և գիտելիքների յուրացումը կատարվում է փոքր խմբերով, որոնց տրվում են տարաբնույթ գործնական առաջադրանքներ, ապա կազմակերպվում են քննարկումներ:

Գրաբարից աշխարհաբար տեքստերի թարգմանությունը կատարվում է փոխներգործուն նշանների համակարգի միջոցով:

Բանալի բաներ. գրաբարի ցուցական դերանուններ, գրաբարի դասավանդում, ժամանակակից մեթոդներ, արդյունավետ ուսուցում, ցուցական դերանունների գործածություն, խմբային աշխատանք, հմտություններ և կարողություններ, սկզբնաղբյուրներ, փոխներգործուն նշանների համակարգ:

Դասի նպատակներն ու խնդիրները բխում են առարկայի՝ ուսումնական ծրագրով նախատեսված ակադեմիական գիտելիքներից, համաձայն որի՝ ուսանողը պետք է իմանա՝

- ա) ցուցական դերանվան ձևաբանական առանձնահատկությունները,
- բ) ցուցական դերանվան տեսակները, նրանց արտահայտած իմաստները,
- գ) ցուցական դերանունների հոլովումը, կազմությունն ու գործածությունը գոյականների հետ:

Ուսանողը պետք է կարողանա՝

- ա) բնագրում ճանաչել ցուցական դերանունների ուղիղ և հոլովված ձևերը, որոշել նրանց իմաստային նրբերանգները,
- բ) համեմատություն անցկացնել ցուցական դերանունների և այլ խոսքի մասերի միջև:

Թեմայի համար նախատեսված է 6 ժամ:

Գրաբարի դասավանդման իրողությունները անհրաժեշտ է համեմատել և գուգահեռել ժամանակակից գրական արևելահայերենի դասավանդման հետ, որը գրաբար ուսումնասիրելիս ուսանողների համար հենարան է և գիտելիք:

Դասի առաջին՝ խթանման փուլն սկսում ենք պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդով, որը կոչվում է մտագրոհ կամ մտքերի տարափ. սա մի քայլ է նոր նյութի յուրացման ճանապարհին: Մտագրոհին մասնակցում է ամբողջ լսարանը:

Մտագրոհի փուլում նյութի ընկալման համար նախընտրում ենք կիրառել հարցերի ռազմավարությունը. այն հնարավորություն է տալիս ներառարկայական կապեր ստեղծելով նպաստել նոր թեմայի արդյունավետ յուրացմանը:

Նախքան ցուցական դերանունների ուսուցման դասին անցնելը մեկ անգամ ևս վերհիշում ենք հայերենի խոսքի մասերի համակարգում դերանունների

յուրահատուկ տեղն ու ներխուժմասային իմաստների բազմազանությունը՝ ձևաբանական հատկանիշների, շարահյուսական կիրառությունների անմիօրինակությամբ: Հին հայ քերականության մեջ արդեն Ստ. Սյունեցին(VIIIդ.) անձնական և ստացական դերանունների ցանկը լրացնում է ցուցականներով: Որոշ մեկնիչ քերականներ ընդգծում են դերանունների տարածամանակային, դիմացուցական նշանակությունները՝ դրանց մասնավորող իմաստը համեմատության մեջ դնելով հատուկ անունների հետ: Համեմատաբար ուշ շրջանի հայ քերականները այդ խոսքի մասը մաքրեցին հունաբանություններից, մերժեցին երկակի թվի, անվանական սեռի և այլ արհեստական և խորթ ձևերը: Սակայն երկար ժամանակ որոշ ցուցական դերանուններ, հող համարվելով, քննվում էին առանձին¹: Այնուամենայնիվ, դերանվան բնութագրական հատկանիշներ էին դիտվում անվանը փոխարինելու և դեմք առնելու(դիմառնության) հատկանիշները: Դերանունները իմաստային ընդհանրություններ ունեն գոյականի, ածականի, թվականի և մակբայի հետ (ներառարկայական կապեր), և այս ընդհանրությամբ էլ պայմանավորվում են նրանց ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: Գրաբարում դերանունները բաժանվում են ութ տեսակի՝ անձնական, ցուցական, ստացական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ:

Հայ լեզվաբաններն իրենց աշխատություններում դերանունները բնորոշելու և սահմանելու ընթացքում հիմնվում են մի շարք դրույթների վրա, որոնք շրջանառվում են նաև ընդհանուր լեզվաբանության ոլորտում: Դրանք են՝ ա) դերանունների՝ այլ խոսքի մասերի փոխարինման հատկությունը, բ) ընդհանրական, ոչ տարբերակված իմաստ ունենալը, գ) իրենց արտահայտած առարկաների հատկանիշը չանվանելը:

Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն ուսանողների գիտելիքները, հմտությունները, վերլուծական կարողությունները զարգացնելու գործում: Ուսանողները հնարավորություն են ստանում, ուղղակիորեն առնչվելով նյութին, զարգացնելու քննադատական մտածողությունը, հարցադրումներ անելու, բացատրելու և մեկնաբանելու կարողությունները: Սկզբնաղբյուրները հետաքրքիր գաղափարների շտեմարան են, որոնք ինքնուրույն ու ստեղծագործական մտածողությունը զարգացնող կարևոր գործիքներ են: Դրանք զարգացնում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտությունը²:

Ուսանողները, նախապես հանձնարարված գիտական գրականությունից (Մ. Աբեղյան «Հայոց լեզվի տեսություն»(1965), Հ. Աճառյան «Լիակատար քերականություն հայերեն լեզվի», հ. 2,(1952), Մ. Ղազարյան «Հայոց լեզվի համառոտ պատմություն»(2006), Մ. Ղազարյան «Հայոց գրական լեզվի պատմություն», հ.1,(1961)), ներկայացնում են, որ գրաբարում դերանվանական հոլովման առանձնահատկությունները կարելի է տեսնել ցուցական դերանունների հոլովման մեջ:

Ուսանողները, մեկը մյուսին հաջորդելով, ներկայացնում են, որ գրաբարի ցուցական դերանունները եռաշարք են՝ առաջացած հնդեվրոպական ծագման՝

¹Տե՛ս **Հ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 178-179:

²Տե՛ս **Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Մ. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան**, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004:

so*, do*, no* տարբեր հնչյունափոխությունների միջոցով հիմքերից: Օրինակ՝ մոտ առարկան ցույց տվող դերանունը հանդես է գալիս՝ հին սլավոներենում сѣ սեռ. cero, հայերենում այս, սա, հին իռլանդերենում ce ձևերով. հեռու առարկան ցույց տվող դերանունը հանդես է գալիս *w, *n, *l բնորոշ հնչյուններով, որոնցից հայերենը ունի ն արմատով այն, սլավոներենը՝ ох, իտերերենը՝ aniš, հին գերմաներենը՝ jener, հունարենը՝ ένη(վաղը չէ մյուս օրը) և այլն¹:

Մա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դերանունների u, η, ն հնչյուններն արմատական են, որոնք հայերենում գործածվում են որպես հոդեր: Ըստ Ա-ճառյանի՝ հայերենի ցուցականները կազմում են երեք շարք, որոնք միմյանց հետ կատարելապես զուգահեռ են գնում: Բոլորի հիմնական տարրն են կազմում u, η, ն-ն. «Մ մերձավորագույն առարկաների համար, որ խոսողի մոտն է, դ-ավելի հեռու առարկաների համար, որ խոսակցի մոտն է, ն-հեռագույն առարկաների համար, որ երրորդ դեմքի մոտն է»²:

Նոր դասանյութին վերաբերող նախադրյալներ ստեղծելուց հետո անցնում ենք իմաստի ընկալման փուլին, որը ներկայացնում ենք գծագրական դասակարգիչների միջոցով:

Տարբեր խոսքի մասերի հետ ունեցած իմաստային ընդհանրությունները ցույց տալու նպատակով փորձում ենք ցուցական դերանունները ներկայացնել աղյուսակի տեսքով:

Ցուցական դերանուններ				
Գոյականին հարաբերակից	Ածականին հարաբերակից	Թվականին հարաբերակից	Մակբային հարաբերակից	
Առարկա, անձ ցույց տվող և առակայի հատկանիշ մատնանշող		Առարկայի քանակ մատնանշող	Գործողության ձև ցույց տվող	Գործողության տեղ ցույց տվող
Մա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի		Այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ	Այսպես, այդպես, այնպես, նոյնպես	այստեղ, այդտեղ, այնտեղ, նոյնտեղ

Աղյուսակը կազմելուց հետո ուսանողների ուշադրությունը պետք է հրավիրել առաջին սյունակի օրինակների վրա (ինչո՞վ են առանձնանում առաջին շարքի դերանունները): Նրանք նկատում են, որ այս շարքի դերանունները մատ-

¹ Տե՛ս **Մ. Ղազարյան**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 2006, էջ 98-99:
² **Հր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի /համեմատությամբ 562 լեզուների/, Կ. 2, 1954, էջ175 :

նանշում են առարկա և առարկայի հատկանիշ, միաժամանակ կարևորելով, որ **սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն** դերանունները հոլովվում են դերանվանական հոլովմամբ: **Սա, դա, նա** դերանունները անձնանիշ կամ առարկայանիշ են, այսինքն՝ հարաբերակցում են գոյականներին, իսկ **սոյն, դոյն, նոյն** և **այս, այդ, այն** դերանունները նշանակում են և՛ անձ կամ առարկա, և՛ հատկանիշ, այսինքն՝ և՛ գոյական են, և՛ ածական:

Այնուհետև նրանք ներկայացնում են, որ **այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն** դերանուններով և **պէս, չափ, քան** բառերով կազմվում են նաև հետևյալ ցուցական դերանունները՝ այսպէս, այդպէս, այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի, այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այնպիսի, նոյնպիսի, այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ:

Գրաբարի որոշ դերանուններ հոլովվում են անվանական հոլովմամբ՝ համապատասխան հոլովիչներով, իսկ որոշ դերանուններ՝ առանց հոլովիչների, արմատների յուրահատուկ փոփոխություններով: Ըստ այս առանձնահատկության՝ դերանունների հոլովումը կոչվում է դերանվանական հոլովում:

Այն հարցին, թե ի՞նչ առանձնահատկություններ են ցուցաբերում ցուցական դերանունները հոլովման ժամանակ, ուսանողները պատասխանում են, որ հայերենի դերանունները քերականական սեռեր չունենալու պատճառով համարյա թե միևնույն վերջավորություններն ունեն թեք հոլովներում. Օրինակ՝ **սա, դա, նա** դերանունների սեռական հոլովը կլինի **սորա, դորա, նորա**. **այս, այդ, այն՝ այսր, այդր, այնր**. **սոյն, դոյն, նոյն՝ սորին, դորին, նորին**: Այս բոլոր դերանունների սեռական հոլովին բնորոշ հատկանիշը **ր** հնչյունն է, որը պահպանված չէ հնդեվրոպական լեզուներում:

Այս դերանունների տրականը տարբերվում է սեռականից իր **մ** հոլովակազմիչով. ինչպես՝ սմա, դմա, նմա, այսմ, այդմ, սմին, դմին, նմին:

Բացառական հոլովը կազմվում է տրականից **ի** նախդրով և է հոլովակազմիչով, ինչպես՝ ի սմանէ, ի դմանէ, ի նմանէ, յայսմանէ, յայդմանէ, յայնմանէ, ի սմին, ի դմին, ի նմին:

Բացառական հոլովի է վերջավորությունը, որը հանդես է գալիս նաև մի շարք գոյականների բացառականում, հավանաբար առաջացել է et(at) ձևից: Իսկ **ն**-ն առաջացել է տրական հոլովի **մ**-ի ազդեցությամբ՝ տարնմանության հետևանքով¹:

Գործիական հոլովը կա՛մ կազմվում է գոյական անունների գործիականի նման, կա՛մ էլ տրականից՝ գործիականի բ, լ հոլովակազմիչով, ինչպես՝ սովաւ, դովաւ, նովաւ, այսու, այդու, այնու, սովիմբ, դովիմբ, նովիմբ: Գործիական հոլովի սովաւ, դովաւ, նովաւ, սովիմբ, դովիմբ և նման այլ ձևերը բարդ կազմություն ունեն. Այդ բառերի գործիականն ունեցել է սո, դո, նո հիմքերը, որոնց ավելացվել է գործիական **ւ** հոլովակազմիչը:

Ցուցական դերանունների հոգնակին կազմվում է հայերենի հոլովական օրինաչափություններով, **ք, ց, ս**, հոգնակի վերջավորությունների օգնությամբ,

¹ Մ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, 2-րդ հրատ., Երևան, 1981, էջ 99-100:

ինչպես՝ սոքա, դոքա, նոքա, սոցա, դոցա, նոցա, սոսա, դոսա, նոսա, սոքաւք, դոքաւք, նոքաւք և այլն:

Հայերենի ցուցական դերանունները, հնդեվրոպական լեզուների նույն տիպի դերանունների հետ առնչակցվելով, ունեն նաև պատմականորեն ձևավորված հատուկ դրսևորումներ, որոնք բնորոշ են միայն հայերենին:

Տեսական նյութն ավարտելով՝ անցնում ենք գործնականին՝ գրատախտակին հոլովելով դերանունները¹.

Եզակի Հոգնակի

Ու. սա դա նա սոքա դոքա նոքա

Հ. (զ)սա (զ)դա (զ)նա (զ) սոսա (զ) դոսա (զ)նոսա

Ս. սորա դորա նորա սոցա դոցա նոցա

Տ. սմա դմա նմա սոցա դոցա նոցա

Բ. ի սմանէ ի դմանէ ի նմանէ ի սոցանէ ի դոցանէ ի նոցանէ

Գ. սովաւ դովաւ նովաւ սոքաւք(օք) դոքաւք (օք) նոքաւք (օք)

Այս, այդ, այն դերանունները հոլովվում են երկու ձևով՝ կարճ և երկար: Երկար ձևերը հանդես են գալիս եզակի թվի թեք և հոգնակի թվի բոլոր հոլովներում:

Եզակի

Ու. այս այդ այն

Հ. (զ) այս (զ)այդ (զ)այն

Ս. այսր, այսորիկ այդր, այդորիկ այնր, այնորիկ

Տ. այսմ, այսմիկ այդմ, այդմիկ այնմ, այնմիկ

Բ. յայսմ, յայսմանէ յայդմ, յայդմանէ յայնմ, յայնմանէ

Գ. այսու, այսուիկ, այդու, այդուիկ այնու, այնուիկ

Հոգնակի

Ու. այսք, այսոքիկ այդք, այդոքիկ այնք, այնոքիկ

Հ. (զ)այս, (զ)այսոսիկ (զ)այդ, (զ)այդոսիկ (զ)այն, (զ)այնոսիկ

Ս. այսց, այսոցիկ այդց, այդոցիկ այնց, այնոցիկ

Տ. այսց, այսոցիկ այդց, այդոցիկ այնց, այնոցիկ

Բ. յայսց, յայսցանէ յայդց, յայդցանէ յայնց, յայնցանէ

Գ. այսոքիւք այդոքիւք այնոքիւք

Հոգնակի հայցականում **այս** և **այդ** դերանունների կարճ ձևերը **ս** հոլովակերտ չեն ստանում: Հոգնակի գործիականում այս դերանունները հոլովվում են միայն երկար ձևերով՝ այսոքիւք, այդոքիւք, այնոքիւք:

Թե ինչ առանձնահատկություններով են օժտված **սոյն, դոյն, նոյն** դերանունները, ներկայացնում է ուսանողների հաջորդ խումբը: Ընդունված է, որ այս դերանունները իմաստով հոմանիշ են **սա, դա, նա, այս, այդ, այն** դերանուններին և հաճախ փոխարինում են դրանց:

Եզակի

Ու. սոյն դոյն նոյն

Հ. (զ)սոյն (զ) դոյն (զ) նոյն

Ս. սորին դորին նորին

¹ **Ս. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 79-85, Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1987, էջ 104-110:

S. սմին դմին նմին

Բ. ի սմին ի դմին ի նմին

Գ. սովին, սովիմբ դովին, դովիմբ նովին, նովիմբ

Հոգնակի

Ու. սոքին, սոյնք դոքին, դոյնք նոքին նոյնք

Հ. (զ)սոսին , (զ)սոյնս (զ)դոսին (զ)դոյնս (զ)նոսին (զ)նոյնս

Ս. սոցին, սոցուն, սոցունց դոցին, դոցուն, դոցունց նոցին, նոցուն, նոցունց

S. սոցին, սոցուն, սոցունց դոցին, դոցուն, դոցունց նոցին, նոցուն, նոցունց

Բ. ի սոցունց ի դոցունց ի նոցունց

Գ. սոքիմբք,սովիմբք դոքիմբք, դովիմբք նոքիմբք, նովիմբք

Իմաստի ընկալման փուլում դերանունների և գոյականների հոլովական և թվային համաձայնության ուսուցումը կատարում ենք խմբային հետազոտության միջոցով: Վերոնշյալ ցուցական դերանուններից այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դերանունները գործածվում են գոյականների հետ՝ համաձայնվելով և՛ հոլովով, և՛ թվով:

Բնագրերը՝ որպես կապակցված խոսքի օրինակելի նմուշներ, լավագույն միջոցն են նման կարգի լեզվական իրողություններն ընկալելու համար: Ուսանողներին նախապես տրվել էր հանձնարարական՝ տեսական նյութին վերաբերող յուրաքանչյուր իրողության կամ շեղումի համար ներկայացնել համապատասխան օրինակ՝ ձեռքի տակ ունենալով V դարի պատմիչների երկերը (Փ. Բուզանդ, Ագաթանգեղոս, Ղ. Փարպեցի, Եղիշե, Մ. Խորենացի, Եզն. Կողբացի):

Այս, այդ, այն դերանունները գործածվում են գոյական անունների հետ և՛ նախադաս, և՛ ետադաս:

Նախադաս գործածվելիս **այս այդ, այն** դերանունները՝ ա) հոլովով ու թվով համաձայնում են գոյական անուններին, բացի հոգնակի ուղղական և հայցական, մասամբ էլ՝ գործիական հոլովներից, որտեղ մնում են եզակի, բ) հոլովվում են կարճ ձևով, գ) իրենց վրա են կրում գոյականների նախդիրները:

Եզակի Հոգնակի

Ու. այս պարիսպ այս պարիսպ

Հ. (զ)այս պարիսպ (զ)այս պարիսպս

Ս. այսր պարսպի այսց պարսպաց

S. այսմ պարսպի այսց պարսպաց

Բ. յայսմ պարսպէ յայսց պարսպաց

Գ. այսու պարսպաւ այսու պարսպաւք, այսոքիւք պարսպաւք

Նրանք նշում են, որ ցուցական դերանուններով արտահայտված որոշիչները շարադասվում են գոյականից թե՛ առաջ, թե՛ հետո և երկու դեպքում էլ սովորաբար հոլովով ու թվով համաձայնում են որոշյալին: Այս դերանունների համաձայնության ժամանակ դրսևորվում են այնպիսի հատկանիշներ, որոնցով զգալիորեն տարբերվում են թե՛ մյուս դերանուններով, թե՛ այլ խոսքի մասերով արտահայտված որոշիչներից:

Նախադաս գործածվելիս **այս, այդ, այն** ցուցական դերանունները համաձայնության մեջ դրսևորում են հետևյալ ընդհանուր օրինաչափությունները՝

1. Գոյականների վրա դրվում են առաջին կամ կարճ ձևերով:

2. Որոշիչն ու որոշյալը հոլովով ու թվով համաձայնում են միմյանց հետ, քանի որ հոգնակի ուղղական, հայցական, մասամբ էլ հոգնակի գործիական հոլովներից, որտեղ այս, այդ, այն դերանունները սովորաբար դրվում են եզակի թվով:

3. Նախդրավոր հոլովներում նախդիրները դրվում են դերանվան վրա. **Զայնու ժամանակաւ** երթեալ հասանէր՝ եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն հայոց (ՓԲ, III, Գ, 7): **Այնու նշանագրօք** ստոյգ հոլովել զհեզենայ բառից հայկականաց հագներգաբար (ՄԽ, III, ԾԲ, 326): Եւ յայնց ժամանակաց մինչն ի քո հայրենի աթոռոյ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք (Եղ., II, 45)

Իհարկէ, նախադաս գործածվող **այս, այդ, այն** դերանունների կանոնները ունենում են նաև զգալի շեղումներ: Ամենատարածված շեղումներից մեկը թվի համաձայնության խախտումն է, երբ հոգնակի որոշյալի մոտ այս, այդ, այն դերանունները հաճախ մնում են եզակի, չնայած որ հոլովով համաձայնած են լինում: Ուսանողները հանդես են գալիս իրենց դուրս բերած օրինակներով՝ Արդ **այդմ երախտեացոյ** եւ երես դարձուցանեմ (ՓԲ, IV, ԺԱ, 89): Վասն **այսք պատճառանաց** աղաչեցի զձեզ՝ տեսանել եւ խօսել (ՂՓ, III, 45):

Ներկայացված օրինակներում քիչ չեն նաև այն դեպքերը, երբ նախադաս **այս, այդ այն** դերանուններն անհամաձայն են մնում իրենց որոշյալի հետ հոլովով կամ միաժամանակ և՛ հոլովով, և՛ թվով, այսինքն՝ գոյականը կարող է դրվել եզակի և հոգնակի տարբեր հոլովաձևերով, իսկ նրա դերանուն որոշիչը՝ եզակի ուղիղ ձևով. Զի՞նչ հատուցուք մեք աստուածոցն փոխանակ **այս մեծի** յաղթութեանս (Եղ.): Այս գործով արժանի եղեւ տեսանել (ՓԲ): Եւ **այս սեանց** խաչքն հաւասար էին այնր լուսեղէն սեանն թակաղաղի (Ագթ., ԸԲ, 384):

Ետադաս գործածվելիս **այս, այդ, այն** դերանունները՝ ա) հոլովով ու թվով համաձայնում են գոյական անուններին. բ) հոլովվում են երկար կամ երկրորդ ձևով. գ) գոյականի նախդիրները կրկնվում են դերանունների վրա. դ) գոյականները ստանում են համապատասխան դերանվան հոդը՝ **ս, դ, ն**:

Եզակի Հոգնակի

Ու. դուստրս այս դստերքս այսոքիկ

Հ. (զ) դուստրս այս (զ)դստերսս (զ)այսոսիկ

Ս. դստերս այսոքիկ դստերցս այսոցիկ

Տ. դստերս այսմիկ դստերցս այսոցիկ

Բ. ի դստերէս յայսմանէ ի դստերցս յայսցանէ

Գ. դստերքս այսուիկ դստերքքս այսոքիւք

Օրինակներ՝ Եւ միխթարեաց զքեզ **տեսլեամբդ այդուիկ** (ՂՓ, I, ԺԷ, 64): Պատգամս յդէր **օրինակաւս այսուիկ** (Ագ., 39): Ուր և իցեն **զկողմամբքդ զայդոքիւք**՝ զհետս նոցա գտանել մարթասցես (ն.տ., 156): Համբարձաւ թագաւորն **ի կոմանցն յայնցանէ** (ն.տ., 156):

Վերոհիշյալ կանոններն ունեն մասնակի շեղումներ.

ա) երբեմն այս, այդ, այն դերանունները հոլովվում են կարճ ձևով: բ) հոլովով ու թվով կարող են չհամաձայնել գոյականներին, գ) նախդիրները կարող են չկրկնվել դերանունների վրա, դ) գոյականը կարող է չստանալ համապատասխան դերանվան հոդը:

Օրինակ՝ Տո՛ւր ինձ **զվարձակս զայս** (ՄԽ, 2, ԿԳ): Որ **ի ժամանակին յայնմ** գործեցան յաշխարհիս Հայոց (ՂՓ, II, ԾԷ, 219): Եւ կարծեաց ի միտս իւր թէ ստոյգ են **բանքն այն** (ՓԲ, V, ԼԸ, 209): Ամենայն **բանքդ այդ** եւ պատգամդ գոր յղեալ է Վահանայ (ՂՓ, III, Դ, 358):

Սոյն, դոյն, նոյն դերանունները գոյականների հետ գործածվում են նախադաս և սովորաբար հոլովով ու թվով համաձայնում նրանց: Հոգնակի ուղղականում և հայցականում այդ դերանունները գոյականների հետ գործածվում են սովորաբար եզակի թվով կամ սոքին, դոքին, նոքին, գոսսին, գոսսին, գնոսսին ձևերով, իսկ հոգնակի գործիականում համաձայնում են միայն հոլովով՝ թվով մնալով եզակի:

Եզակի Հոգնակի

Ու. նոյն ճանապարհի նոյն կամ նոքին ճանապարհիք

Հ. (զ)նոյն ճանապարհի (զ)նոյն կամ (զ)նոսին ճանապարհս

Ս. նորին ճանապարհի նոցին ճանապարհաց

Տ. նմին ճանապարհի նոցուն ճանապարհաց

Բ. ի նմին ճանապարհի ի նոցունց ճանապարհաց

Գ. նովին ճանապարհաւ նովին ճանապարհաւք

Սոյն, դոյն, նոյն ցուցական դերանունները գոյականի որոշիչ են դառնում նախադաս կիրառությամբ՝ համաձայնվելով գոյականի հետ հոլովով ու թվով, բացի հոգնակի ուղղականից, հայցականից և գործիականից, որտեղ մնում են եզակի:

Օրինակներ՝ **Նորին վարդապետութեանն** զունկնդրութիւն մատուցեն (Ագ., 409): Ըստ **նմին օրինակի** առնէին սոքա նշանս մեծամեծս (ՓԲ, ԺԶ, 6): Գուցէ մեռանիցիմ **սովին մեղօք** (ՂՓ, ՀԵ, 25): Ո՞չ **նոյն պատերազմունք** են (ԵԿ, ԻԵ, 1): **Զնոյն օդս** ծծիցեն եւ **նովին կերակրովք** ... բուծանիցին (ն. տ., ԺԱ, 2):

Պատահում են նշված դերանունների միայն հոլովով համաձայնվելու դեպքեր, ինչպես օրինակ՝ Արդարն ի վերայ **դորին բանից** պնդեալ կաս (ՂՓ, ԿԴ, 21): Զկնի **սորին իրացս** այսոցիկ եկին բազմութիւնք սրբոց վկայիցն աստուծոյ (ՓԲ, ԺԴ, 3):

Քիչ չեն այն դեպքերը, երբ այս դերանունները մնում են անհամաձայն. **Նոյն մարմինք նոյն հոգւով** բերեալ զգործս վաստակոցն արդարութեան ... յարքայութիւն վերանայցեն (Ագ., 529): Որպէս ասէն գիտողն **ի նոյն սահմոսարանին** (ն. տ., 584): Այժմ դեռ **ի նմին** գործ կամ (ՓԲ, Ը, 6):

Խիստ հազվադեպ հանդիպում ենք **սոյն, դոյն, նոյն** ցուցական դերանունների ետադաս գործածության. Զօրէնս և **պաշտօն զնոյն** ունի (ՂՓ, ԻԱ, 17):

Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի ցուցական դերանունները գործածվում են հիմնականում նախադաս և սովորաբար չեն համաձայնվում: Օրինակներ՝ Յորում ոչ ոք **այսպիսի իրաց** փոյթ յանձին ուներ (ՄԽ, 1, ԺԴ): **Այդպիսի ջախմամբ** վախճանեցաւ (ն. տ., 2, ԽԶ): Առ **այսպիսի** ճշմարիտ **ասացածս** անպատշաճ հարցուածս մատուցանեն (ԵԿ., 1, Դ):

Բավական հաճախ սրանք համաձայնվում են որոշյալի հետ՝ Առնէր հարցումն վասն **այսպիսոյ պատճառի** (ՄԽ, 1, ԻԵ): Ուր **յայնպիսեաց կարծեաց** ... վրիպեալ լիցին (ՂՓ, Ծ): Ի կենդանութեանն **այնպիսոյ** առն ... գնդաւ յաղթեալ գտաւ նա (ն. տ., 2Դ): **Այնպիսոյ** բարոյ **աստուծոյ** որդի՝ ի չարէն որդւոյն

սատակեցաւ (ԵԿ, Ժ, 2): Քանզի էր արդարն սաստիկ հզոր **այսպիսեաց գրուցաց** արժանի (ՄԽ, Ը, 2): Դարձան հանդերձ **թղթով այսպիսեաւ** (ն. տ., 3, ԾԷ):

Այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ ցուցական դերանունները սովորաբար գործածվում են որպես նախադաս չհամաձայնվող ուրույն: Օրինակներ՝ Կորեան **այնչափ ազգք** (ԵԿ, ԺԶ, 3): Յետ **այսչափ հարցից** ... յանձն իւր տարեալ (Ագ., 122): Ի վերայ **այնչափ սիրոյ** և **վաստակոց**, փոխանակ կեանս առնելոյ՝ զարն հատեք, ասէր (Եդ., 7): Յարձակեալք ի վերայ Միհրանայ **այնքան արամբք** (ՂՓ, ԶԸ):

Այսքան, այդքան, այնքան դերանունները երբեմն համաձայնվում են որոշյալ գոյականի հետ՝ Եւ այսպիսեօք **այսքանօք ժողովրդօվք** բամացեալ, ի ծերութիւն պարատութեան հոգևորի զմեզ ժողովեաց (ՄԽ, 2, ՂԱ):

Այսպիսով՝ ցուցական դերանունները նախադաս և ետադաս գործածության դեպքում գերազանցապես համաձայնում են որոշյալին՝ յուրահատկություններ դրսևորելով թվային և հոլովական համաձայնության հարցերում:

Թեմայի յուրացումն ստուգելու նպատակով խմբերին տալիս եմ հետևյալ հանձնարարությունները.

1. Հոլովել հետևյալ կապակցությունները՝

այս գաւառ, այն եկեղեցի, այդ մասն, կինդ այդ, բանս այս, գիւղն այն

2. Որոշել այս, այդ, այն դերանունների հոլովը և թիվը.

- դրամաշնորհներ շահելու և դրամաշնորհային ծրագրեր կառավարելու

հմտություններ,

- ծրագրերի իրականացման մոտիվացիոն միջավայրի ձևավորում,
- հետադարձ կապի ապահովում և ժամանակին արձագանքում,
- խմբային աշխատանքներում կոնֆլիկտաբանության հմտությունների

կիրարկում:

Ծրագրերի կառավարում և կազմակերպում

- ծրագրի անխափան իրագործման պայմանների ապահովում,
- փոփոխվող իրավիճակներում կառավարչական ճկուն որոշումների իրականացում,

- ֆինանսական այլընտրանքային աղբյուրների որոնում,
- բանակցային հմտությունների ներդաշնակեցում,
- թիրախային վերջնարդյունքների հասանելիության ճանապարհային քարտեզի կազմում:

Հետազոտական ստեղծարար հմտություններ

- գիտական նորույթի մշակման և ներկայացման հմտություններ,

² **Տե՛ս**, Եվրոպական համալսարանների ընկերակցության պաշտոնական կայք, <http://www.eua.be/eua-work-and-policy-area/building-the-european-higher-education-area>

- ինովացիոն գաղափարների և հիպոթեզների ձևակերպում և ներկայացում,

- գիտական շրջանակներում հրատարակումներով և պրեզենտացիաներով ներկայանալու հմտություններ,

- հետազոտական գործիքակազմի անընհատ կատարելագործում,

- գիտական և հետազոտական բանավեճերին մասնակցության մշակույթ:

Աշխատանքային հմտություններ

- ընդգծված առաջնորդություն,

- արդյունավետ աշխատանքի կազմակերպում՝ վերջնաժամկետների և որակի բարձր չափանիշների ապահովման պայմաններում,

- գաղափարների ներդրման և արգելքների հաղթահարման կամային հատկությունների դրսևորում,

- աշխատանքային պարտականությունների իրագործման ստեղծարար մոտեցումների ցուցաբերում,

- աշխատանքային վերջնարդյունքների հասանելիության գործընթացին խորքային վերլուծությունների իրագործում,

- կարիերայի կառավարում,

- մտավոր սեփականության պահպանության ապահովում,

- գյուտարարության և ռացիոնալիզատորական առաջարկների հեղինակային իրավունքի պահպանում:

Եթե համեմատելու լինենք դոկտորանտի մասնագիտական հմտությունները բարձրագույն կրթությամբ անձին հատուկ ընդհանուր մասնագիտական հմտությունների հետ, ապա պարզ կդառնա, որ դոկտորանտուրան նախորդ կրթական համակարգերից տարբերվում է հենց նրանով, որ շրջանավարտին մատուցում է փոխանցելի հմտություններ, որոնք ձևավորման հիմքում դրվում են անձնային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են.

- ինքկառավարման բարձր մակարդակը,

- ստեղծար գործունեության բարձր աստիճանը,


- որոշումների կայացման ճկունությունը,

- հետազոտական վերլուծությունների որակի չափանիշները:

▪

Գծապատկեր 2

Դոկտորի որակական հատկանիշների
ձևավորման ընթացքը բուհական կրթության աստիճաններում




Մասնագիտական կրթության մրցունակության բարձրացման ուղենիշ պետք է համարել նաև ստեղծարար մտածելակերպի ձևավորումը ուսանողության շրջանում: Փորձը ցույց է տալիս, որ մեր հանրապետությունում կազմակերպվող բակալավրիատի կամ մագիստրատուրայի ծրագրերը զուրկ են ինովացիոն բովանդակությունից: Ուսանողական և պրոֆեսորադասախոսական կազմի որոշ մասի մոտ դեռևս գերակշռում են կրթական գործընթացի մեխանիկական ընկալումները, երբ ուսումնառությունը հիմնականում դիտվում է որպես դասախոսության միջոցով գիտելիք փոխանցելու և այնուհետև՝ քննության ընթացքում այն ստուգելու գործողություն:

Հետևաբար, այս պարագայում կրթական գործընթացը դասախոսների և ուսանողական համակազմի մի մասը դեռևս շարունակում է դիտարկել որպես գիտելիք, տեղեկություն փոխանցելուն՝ այլ ոչ թե մտածողություն ձևավորելու ուղղված գործընթաց: Մակայն, համալսարանի այսօրվա շրջանավարտի ունակությունների շրջանակում կարևորվում են ոչ միայն մասնագիտական գիտելիքները, այլև նրա ստեղծարարության, նորարարության հակումներին ինքնադրսևորման կարողությունները:³

Ուստի, այսօր մրցակցային են համարվում այն կրթական ծրագրերը, որոնց վերջանդյունքներով ձևավորվում են ոչ միայն “գիտակ”, այլև “ստեղծարար հմտություններով” շրջանավարտներ: Այս առումով, մասնագիտական կրթական ծրագրերում ներակայումս մեծ ուշադրություն պետք է դարձվի ուսանողի ոչ թե ձևական, այլ արդյունավետ անհատական աշխատանքի վերջանդյունքներին, նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնելու ստեղծարարությունը, նորարարությունը և ինքնադրսևորումը, որը Բոլոնիայի ներկայիս գործընթացի պահանջներից մեկն է:

Հենց այստեղ է, որ բուհը ճկունություն պետք է ցուցաբերի՝ ուսումնառության ընթացքում ձևավորելու շրջանավարտի օպտիմալ չափաբաժնով գիտելիքներով, հմտություններով և կարողություններով աշխատանքային ունակություններ: Ընդ որում, մասնագիտական ունակությունները ձևավորվում են կրթության ընթացքում ուսանողի կողմից ձեռքբերված գիտելիքների, հմտությունների և կարողությունների շրջանկների ընդհանուր հատությամբ(տես գծապատկեր 3):

³ ԲԿԵՏ նախարարների կոնֆերանս, Երևանի կոմյունիկե 2015



Մասնագիտական կարողությունները անձի աշխատանքային գործունեության վերջնարդյունքներն են, որոնք չեն կարող ձևավորել առանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների: Հետևաբար, հենց կարողություններն են վերջին հաշվով բնութագրում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած մասնագետի որակական հատկանիշները: Ընդ որում, որքան մեծ է մասնագետի կարողությունների շրջանակը, այնքան բարձր է նրա որակական հատկանիշների աստիճանը:

Այսպես, հաշվապահական հաշվառման մասնագետներ են պատրաստվում թե ուսումնարաններում, քոլեջներում, բարձրագույն մասնագիտական կրթության առաջին, երկրորդ և երրորդ աստիճաններում: Բնականաբար, որքան բարձրանում է կրթական ցենզը, այնքան ընդլայնվում է մասնագիտության կարողությունների շրջանակը (տես աղյուսակ 1):

⁴ Կազմված է հեղինակների կողմից:

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության շրջանավարտի կարողությունների շրջանակը⁵

Մասնագիտական կարողությունների շրջանակ	ուսումնարան	քոլեջ	բարձրագույն կրթության աստիճաններ		
			բակալավր	մագիստր	դոկտոր
Հաշվետարարության վարում	✓	✓	✓	✓	✓
Ֆինանսական և հարկային հաշվետվությունների Պատրաստում		✓	✓	✓	✓
Միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվությունների պատրաստում			✓	✓	✓
Հաշվետվությունների աուդիտ և որոշումների կայացում				✓	✓
Հաշվային մրցունակ քաղաքականության մշակում					✓

Այսպիսով, մասնագիտական ունակությունների գնահատման շրջանակը կարելի է ներկայացնել հետևյալ ընդհանրական բանաձևով.

Մասնագիտական ունակություններ = գիտելիք + հմտություններ + կարողություններ

Ուստի, համալսարանների համար չափազանց կարևորվում է մասնագիտական ունակությունների ձևավորման բաղադրիչների այնպիսի չափաբաժինների սահմանումը ուսումնական պլաններում, որոնք կնպաստեն մրցունակ շրջանավարտի ձևավորմանը:

Армен Джугурян, Нонна Хачатрян-Методология оценки профессиональных навыков аспирантов. - Современный рынок труда представляет новые требования к вузам. В нынешних условиях работодатели больше всего интересуются вовлечением выпускников с углубленными профессиональными навыками, нежели всесторонне развитыми и большим багажом знаний. С этой точки зрения перед университетами встают проблемы в подготовке востребованных научных специалистов и принимают меры по реальной оценке профессиональных навыков аспирантов с учетом динамичного изменения спроса на рынке труда.

Armen Tshuguryan, Nonna Khachatryan - Methodology for assessing professional skills of post-graduates. - Modern labor market introduces new requirements for universities. In the current employers are most interested for involvement of graduates with in-depth work hard skills, rather than fully developed and a large store of knowledge. From this perspective, the universities are challenged to prepare demanded scientific specialists and taking action on the real assessment of the professional skills of graduate students, taking into account the dynamic changes in demand in the labor market.

⁵ Կազմված է հեղինակների կողմից:

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ԱՏՈՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հաշվի առնելով առաջավոր միջազգային փորձը, ՀՀ բուհերը դանդաղ քայլերով, բայց արմատական վերակառուցումների հաստատակամությամբ պետք է սահուն անցում կատարեն ասպիրանտուրայից՝ դոկտորանտուրայի: Հակառակ դեպքում, հետբուհական կրթության մասով Հայաստանը պարզապես չի կարող մրցակցային դիրքեր գրավել Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում: Այս առումով, անհրաժեշտ է ամբողջապես վերափոխել հետբուհական կրթության անատոմիան և այդ առումով ստեղծել անհրաժեշտ օրենսդրական դաշտ:

Բանալի բառեր. ասպիրանտուրա, ինստիտուցիոնալ վերակառուցում, կրթության շուկա, գիտական պարբերականներ, մասնագիտական խորհուրդ:

ՀՀ-ում բարձրագույն կրթության երրորդ աստիճանում՝ ասպիրանտուրայում, ուսուցման կազմակերպման իրավական հիմքերը ամրագրված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում, ուստի բարեփոխումների ու դրանց իրավական ամրագրման մասին խոսելիս պետք է, անշուշտ, սկսել հենց օրենքից: Այստեղ, պարզվում է, ամրագրված է, որ բարձրագույն կրթության որակավորման համակարգը երկաստիճան է՝ բակալավր և մագիստրոս (հոդված 5): Ասպիրանտուրան ավելի քան տասը տարի գործող օրենքում համարվում է հետբուհական կրթություն, չնայած՝ իրականացվում է հիմնականում հենց բուհերում: Մեր կարծիքով, հենց օրենքում անհրաժեշտ է ամրագրել, որ դոկտորանտուրան (այժմ՝ ասպիրանտուրա) բարձրագույն կրթության երրորդ աստիճանն է, միաժամանակ, հրաժարվելով «հետբուհական» բառից: Մեկ այլ կարևոր հանգամանք՝ օր առաջ հարկավոր է փոխել օրենքում «հետազոտողի որակավորում» արտահայտությունը: Դա որակավորման աստիճան է, որ պիտի տրվեր «հետազոտողի» կրթական ծրագրով ուսանողներին՝ ծրագիրն հաջողությամբ ավարտելուց հետո (հոդված 8, հոդված 9): Սակայն անցած ավելի քան տասը տարվա ընթացքում, ստացվում է, օրենքն ըստ էության չի գործել. կամ հետազոտողի որակավորում համալսարանները չեն տվել, կամ՝ այն որևէ գործատուի, այդ թվում և հենց համալսարանների մոտ որևէ նշանակություն չի ունեցել և դեռևս կիրառելի չէ: Այսպիսով, ինչպես Բոլոնիայի գործընթացն է մեզ հուշում և ինչպես արևմտյան երկրներում է՝ բարձրագույն կրթության երրորդ աստիճանն ավարտելիս պետք է շնորհել դոկտորի (մեզ մոտ՝ գիտությունների թեկնածուի) գիտական աստիճան՝ ատենախոսության պաշտպանության արդյունքում:

Օրենքում ամրագրված մյուս չգործող ինստիտուտը դոկտորանտի ինստիտուտն է՝ «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստելու համար համապատասխան կարգով ձևակերպված անձը»

(հոդված 3): Ըստ էության սա նախկինից մնացած, օրենքում ամրագրված, սակայն այժմ որևէ կերպ չօգտագործվող ինստիտուտ է: Առավել ևս, երբ գիտական առաջին աստիճանը վերանվանվի «դոկտոր» ինչպես երաշխավորում է UNESCO-ն¹, բարձրագույն կրթության երրորդ աստիճանը տրամաբանորեն կարելի է վերանվանել «դոկտորանտուրա» «ասպիրանտուրայի» փոխարեն: Գիտական երկրորդ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտություն չկա կրթական որևէ ծրագիր իրականացնել, առավել ևս, որ այժմ էլ ոչ ոք դրա կարիքը չի զգում: Ավելին, գիտական երկրորդ աստիճանը ուղղակի կապ չպիտի ունենա կրթության հետ, դա զուտ գիտական, հետազոտական աշխատանքի արդյունք է, ուրույն ներդրում, ավանդ գիտության որոշակի բնագավառում: Գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հավակնորդը, թերևս, պետք է բավարարի միայն մեկ պայմանի՝ ունենա գիտական առաջին՝ դոկտորի աստիճան:

Օրենքում ամրագրված հիմնական հասկացություններից հաջորդը, որը ևս հեղինակների կարծիքով պետք է դուրս գա, հայցորդն է՝ «բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձը, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը» (հոդված 3): Սա, ինչպես արդեն նշել ենք I գլխում, Հայրենական Մեծ պատերազմից հետո ԽՍՀՄ-ում ներդրված ինստիտուտ էր, որ պետք է ծառայեր որպես գիտական կադրերի պատրաստման ժամանակավոր միջոց՝ առաջացած բացը լրացնելու համար: Մինչդեռ, այն դեռևս մնալով մեր գիտակրթական համակարգում՝ ավելի շատ ծառայում է որպես գիտության ոլորտի հետ որևէ ուղղակի կապ չունեցող անհատների համար գիտական աստիճան ձեռք բերելու հեշտ միջոց: Պատճառներից մեկը, թերևս դա է, որ ՀՀ ԲՈՀ ներկայացվող ատենախոսությունների զգալի մասն անորակ է:

Էական փոփոխությունների կարիք ունի ՀՀ-ում աստիճանաշնորհման ողջ համակարգը, որը կարելի է ամրագրել առանձին օրենքով: Բերենք այն հայեցակարգային հիմնական դրույթները, որոնք, մեր կարծիքով, հստակեցման կամ փոփոխությունների կարիք ունեն:

Ատենախոսությունների պաշտպանության համար պահանջվում է նախապես առնվազն վեց գիտական հոդված ունենալ ԲՈՀ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում կամ առնվազն մեկ գիտական հոդված ունենալ **web of science** կամ **scopus** միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում ու այդ դեպքում կպահանջվի ևս երկու տպագրված հոդվածի առկայություն: Ընդ որում, այս պահանջը ունիվերսալ է ու տարածվում է բոլոր մասնագիտություններով պաշտպանվող ատենախոսությունների վրա: Եթե բնագիտության՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մեխանիկայի կամ մաթեմատիկայի բնագավառներում միջազգային շտեմարաններում ընդգրկված ու որոշակի ազդեցության գործակից ունե-

¹ **Տե՛ս**, <http://www.uis.unesco.org/Education/Documents/isced-2011-en.pdf>

ցող գիտական պարբերականներում հոդված ունենալը մեծ խնդիր չէ, ապա նույնը չի կարելի ասել հումանիտար ու հասարակագիտական բնագավառում պաշտպանության ներկայացվող ատենախոսությունների համար: Առաջադրվող պահանջը շատ կարևոր է, և անշուշտ, նպաստում է հայրենական գիտության միջազգային ճանաչմանն ու ազդեցության աճին: Մակայն, ցավոք, մյուս կողմից, շատ են հայկական գիտական պարբերականներն ու շատ ցածր է դրանց ազդեցության մակարդակը:

Անհրաժեշտություն կա օրենսդրորեն կարգավորելու նաև հայկական գիտական պարբերականներին ներկայացվող պահանջները այնպես, որ բարձրանա արհեստավարժության մակարդակը, ամրապնդվի գիտականությունն ու դուրս գա արհեստականությունը: Ցանկալի է ստեղծել գիտական հրատարակությունների ազգային գրանցամատյան, մշակել ու իրականացնել գիտական ամսագրերի ու ժողովածուների ուժեղացման քաղաքականություն, խրախուսել դրանց ընդգրկումը միջազգային շտեմարաններում: Նշենք, որ այս հարցն օրախնդիր է հատկապես հայագիտության համար, որի միակ ու հիմնական աջակիցը պետք է հայոց պետությունը լինի:

Հետաքրքիր է, որ Հայաստանն այն փոքրաթիվ երկրների շարքում է, որտեղ ատենախոսությանը զուգահեռ պարտադիր է ունենալ սեղմագիր, որը պետք է արտացոլի ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Ընդ որում, սեղմագիրը պետք է հրապարակվի համապատասխան բուհի կամ գիտական կազմակերպության կայքում: Սա լավ հնարավորություն է երկրի գիտական նորությը մեկտեղելու ու համակարգված ներկայացնելու համար, առավել ևս, որ սեղմագրերի պարզայում, ի տարբերություն ատենախոսությունների, հեղինակային իրավունքի խնդիրներ չեն կարող առաջանալ, դրանք տպագրվում են առնվազն 50 օրինակով ու տարածվում մասնագետների շրջանում, տրամադրվում գրադարաններին ու մասնագիտական կազմակերպություններին:

Այստեղ, թերևս, սեղմագրերի թարգմանության ու օտար լեզվով /անգլերենով/ միջազգային հանրությանը ներկայացնելու խնդիրն է կարևորվում: Խնդրի լուծումը կարելի է տալ պետականորեն ֆինանսավորվող առանձին ոչ մեծ ծրագրով, որի իրականացումը, մի կողմից, կնպաստի հայ գիտնականների ու հայրենական գիտական արդյունքի միջազգայնացմանը, մյուս կողմից՝ այդքան տարածված գրագողության կանխմանը:

Մասնագիտական խորհուրդները նախկինից մնացած, ատենախոսությունների պաշտպանությունը կազմակերպող ու իրենց, կարելի է ասել, սպառած օղակներ են: Աստիճանաշնորհման խորհրդային համակարգը ժառանգած գրեթե բոլոր երկրները հրաժարվել են 1-2 տասնյակ անդամ ունեցող մասնագիտական խորհուրդների «ձառայություններից», իսկ արևմտյան երկրներում արդյունավետորեն գործում են 3-5 հոգանոց մասնագիտական խմբերը: Մեզանում ևս օր առաջ անհրաժեշտ է հրաժարվել ոչ արդյունավետ, մշտապես գործող մասնագիտական խորհուրդներից և փոխարենը յուրաքանչյուր պաշտպանության համար կազմավորել փոքր մասնագիտական խմբեր: Խմբերում հնարավորինս ընդգրկել մասնագետներ արտասահմանից:

Ասենք, որ վերջին շրջանում նույնիսկ Ռուսաստանում են սկսել կազմակերպել «արևմտյան տիպի» պաշտպանություններ: Մանկտ Պետերբուրգի պե-

տական համալսարանում, օրինակ, ատենախոսության պաշտպանության համար ստեղծվում է յոթ հոգանոց խումբ, որում առնվազն երկուսը նույն համալսարանից են, առնվազն երկուական մասնագետներ էլ՝ Ռուսաստանի այլ, նաև արտասահմանյան համալսարաններից: Ընդ որում, այսպիսի պաշտպանությունների արդյունքում ատենախոսին շնորհվում է ոչ թե գիտությունների թեկնածուի, այլ դոկտորի (PhD) գիտական աստիճան: Հայաստանի գիտական պոտենցիալը, մեր բուհերի, գիտնականների ու գիտական կազմակերպությունների ունեցած կապերը լիովին բավարար են Հայաստանում միջազգային ստանդարտներին համապատասխան պաշտպանությունների կազմակերպման համար: Այս դեպքում կկարողանանք հրաժարվել նաև պաշտոնական ընդդիմախոսների ծառայություններից. մասնագիտական խմբում ընդգրկված բոլոր մասնագետները հավասարապես նաև ընդդիմախոսներ կլինեն:

Ներկայացնելով արևմտյան զարգացած երկրներում դոկտորանտուրայի կազմակերպման փորձը և համեմատական վերլուծություններ կատարելով ՀՀ ասպիրանտական համակարգում ձևավորված իրողության հետ, հանգում ենք այն եզրակացության, որ հանդիսանալով Բոլոնիայի համաձայնագրի անդամ երկիր, մեր հանրապետությունը պետք է արմատական փոփոխություններ իրականացնի մասնագիտական կրթական երրորդ աստիճանում: Սակայն, միաժամանակ, համոզմունք ենք հայտնում, որ Զալցբուրգյան սկզբունքների հենքով բարեփոխումներն իրականացվելու են սահուն ու հետևողական, առանց շտապողականության՝ պայմանավորված մի շարք գործոններով, որոնք բերված էին սույն մեթոդական ձեռնարկում:

Կտրուկ բարեփոխումների խոչընդոտ է ***Ֆինանսական գործոնը***: Ասպիրանտուրայում հետբուհական կրթությունը կազմակերպելով հիմնականում ուսանողական կրթավճարներով, դեռևս հնարավոր չէ պատշաճ մակարդակի հասցնել ուսանողների ակտիվ շարժունությունն ու միջազգային համագործակցությունը, լուրջ մտահոգություններ կան կապված պաշտպանվող ատենախոսությունների որակի հետ: Ֆինանսավորման կենտրոնացված աղբյուրների սակավությունը առայժմ թույլ չի տալիս իրականացնել միջգիտակարգային և խորքային հետզոտություններ գիտության բոլոր բնագավառներում, չափազանց ցածր են գիտական ղեկավարների աշխատավարձը, ասպիրանտական կրթաթոշակը, բուհերի ու գիտական կազմակերպությունների լաբորատոր հագեցվածության աստիճանը, որոնք որոշակիորեն խոչընդոտում են արդյունավետ գիտահետազոտական և ուսումնական գործընթացի իրականացմանը:²

Ասպիրանտուրայում առաջնահերթություն են համարվում նաև համակարգի ***ինստիտուցիոնալ վերակառուցումները***, առանց որոնց մասնագիտական կրթության երրորդ աստիճանում բարեփոխումները մակերեսային բնույթ կկրեն, որին առճակատվեցինք մագիստրատուրայում: Անհրաժեշտ ենք համարում որակի մշակույթի ձևավորման, ակադեմիական ազատությունների ընդլայնման, օրենսդրական դաշտի բարեփոխումներին աջակցման գործիքակազմի կիրառումը բարձրագույն կրթության երրորդ աստիճանում, որոնք պետք է ապահովեն աս-

² Տե՛ս, ***Երիցյան Ս. Ճուղույթյան Ա.***, Բարձրագույն կրթության մարտահրավերները, “Էդիթ Պրինտ”, Եր. 2012 թ., էջ 125

պիրանտուրայից դեպի որակապես շահավետորեն տարբերվող դոկտորանտուրային անցման սահուն գործընթացը:

Ակադեմիական միջավայրում բարեփոխումների հանդեպ ձևավորված **կարծրատիպը** նույնպես լուրջ խոչընդոտ է արմատական վերակառուցումների համար: Ավագ սերնդի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և կրթության մենեջերները դեռևս համոզմունք ունեն, թե գործող ասպիրանտական համակարգը տասնամյակների ընթացքում արդարացրել է իրեն և պետք չէ բարեփոխումների քողի տակ այն «քանդել»՝ ձևափոխելով դոկտորանտուրայի, որը դեռևս չի փորձարկվել մեր երկրում և կարող է ձախողման ռիսկեր պարունակել:³

Անշուշտ, հակված ենք այն մտքին, որ չափազանց շտապողականությունը ասպիրանտուրայի և գիտական աստիճանաշնորհման համակարգի բարեփոխումների գործընթացում հարիր չէ: Սակայն, մյուս կողմից, տեղում դոփելն էր անթույլատրելի է, քանզի եթե այդ համակարգը իրեն լիովին արդարացնում էր խորհրդային Միության տարիներին, ապա ներկայումս դրա արդյունավետության բարձրացումն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցումը օրախնդիր է:

Атом Мхитарян - Необходимость законодательных реформ в системе послевузовского образования. - На основе международного передового опыта, в статье предлагаются пути совершенствования системы послевузовского образования в Армении. В частности, считается актуальным срочный переход от системы аспирантуры в докторантуру, с учетом гармонизации учебных и исследовательских компонентов отечественного и европейского программ пост вузовского обучения. С этой целью предлагаются пути усовершенствования законодательных актов в системе высшего образования Армении.

Atom Mkhitaryan - Necessity of legislative reforms in the system of postgraduate education. - On the basis of international paramount practices, in the article is suggested ways to improve the system of postgraduate education in Armenia. In particular, it is considered urgent transition from graduate school system in a doctoral program, taking into account the harmonization of training and research components of the Armenian and European post-graduate training programs. For this purposes, suggests ways to improve the legislation of Armenia's higher education system.

³ **Տե՛ս, Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա.,** Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, հեղինակային հրատ., Եր., 2016 թ., էջ 119

ԲՈՒՀԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԱՆՑԱՆ

ՎԱՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ


Ֆինանսական միջոցների կառավարման մեթոդաբանությունը ՀՀ-բուհերում հիմնականում սահմանափակվում է ծախսերի նախահաշվային վերահսկողական գործառնություններով: Հոդվածում առաջարկվում են նաև համալսարանների ֆինանսական միջոցների կառավարման շրջանակի ընդլայնում՝ ընդգրկելով նաև ֆինանսական ներդրումների նյութական և ոչ նյութական հատույցի արդյունավետության գնահատումներ, որը էականապես կնպաստի կրթական շուկայում բուհերի մրցունակության բարձրացմանը:

Բանալի բառեր. ֆինանսական կայունություն, ֆինանսների կառավարում, կրթության շուկա, բարձրագույն կրթության կառավարման արդյունավետություն

Համալսարանական գործունեության ֆինանսավորումը, իրականացվելով հանրային և մասնավոր աղբյուրներով, առանձնահատուկ պահանջներ է ներկայացնում ֆինանսավորման միջոցների կառավարման համակարգին: Բուհերը իրենց առաքելությունն են համարում բավարարելու ոչ միայն պետական շահեր, այնպես էլ շրջանավարտների սպասումներ: Եվ այս առումով, եթե նախկինում, խնդիր էր դրվում պարզապես ապահովել կրթական ծառայությունների ֆինանսավորման բյուջեի կատարման ընթացքը և ապահովել համալսարանի ֆինանսական միջոցների կայունության պաշարը, ապա կրթական շուկայում մրցակցային դիրքերի ձեռքբերման առումով այն այլևս բավարար չէ և բուհերում ֆինանսական կառավարման արդյունավետությունը արդեն իսկ դիտարկվում է որակական տեսանկյուններով:

Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերը դեռևս լուրջ ուշադրություն չեն դարձնում ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետության բարձրացման խնդիրներին, քանի որ իրենց ջանքերն ուղղում են հիմնականում կրթավճարների հավաքագրմանը և այդ հենքով՝ բուհի անխափան գործունեության ապահովմանը: Բնականաբար, նման իրավիճակում շահեկան դիրքերում են հայտնվում այն բուհերը, որոնք համեմատաբար առավել մեծ փորձ ունեն և կրթական ծառայությունների ոլորտի “հնաբնակներին” են: Ունենալով գործունեության մեծ փորձ և կրթական շուկայում ձևավորված համբավ, ՀՀ պետական բուհերին դեռևս հաջողվում է մեծ թվաքանակով ուսանողներ հավաքագրել և դրանց կրթավճարների հաշվին “խոշոր խաղացողներ” հանդես գալ կրթության շուկայում, ինչը թերևս չի հաջողվում մասնավոր բուհերին:

Գծապատկեր 1
Կրթական ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)¹




Սակայն, մրցակցային տեսանկյունից, բուհերի ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը չպետք է բնութագրել զուտ կրթավաճարների հավաքագրման և մատուցվող կրթական ծառայությունների ծավալների աճի գործընթացով: Այս ոլորտում չափազանց կարևորվում է տնօրինած ֆինանսական միջոցների ծախսահատույցի արդյունավետությունը:

Գործնականում, կրթական ծախսերի արդյունավետությունը հիմնականում գնահատվում է մակրոմակարդակով, հաշվարկելով ՀՆԱ-ի կազմում կրթական ծառայությունների տեսակարար կշիռը (տես գծապատկեր 1), կամ պետական ֆինանսավարման աճի տեմպը՝ մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ոլորտում (տես գծապատկեր 2): Եվ եթե այդ ցուցանիշները կրթական ծառայություններում ֆինանսների արդյունավետ կառավարման գործընթացի որոշակի բնութագրիչներ են պարունակում, ապա միկրոմակարդակով, բուհերի տնօրինած ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը հիմնականում սահմանափակվում է բյուջետային կարգապահության գնահատումներով, խնայողության ռեժիմի իրագործմամբ, ծախսերի օպտիմալացումով:

¹Տե՛ս, **Քարտուղարյան Գ.**, Կրթական ծառայությունների արտահանման կառավարման որոշ հիմնահարցեր ՀՀ-ում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տարեգիրք, 2012, էջ 169

Գծապատկեր 2


**Պետական ֆինանսավորման աճի տեմպը մասնագիտական կրթության
ծառայությունների մատուցման ոլորտում²**



Մյուս կողմից, միայն դրամական հոսքերի հավաքագրման և ծախսերի վերահսկողական գործառնություններով ֆինանսական կառավարումը համալսարաններին չի կարող կրթական շուկայում մրցակցային դիրքեր ապահովել: Անհրաժեշտ են մասնագիտական կրթական համակարգի ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետության գնահատման մրցունակ մեթոդաբանություն, որը մեր կողմից առաջարկվում է իրականացնել հետևյալ սխեմայով (տես գծապատկեր 3):

²Տե՛ս Education at a Glance, OECD Indicators, 2014, page 208

Մասնագիտական կրթության ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանության առաջարկվող շրջանակը³



Մակրոմակարդակով բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն այդ ոլորտում հանրային ռեսուրսների ձևավորմամբ և ըստ համապատասխան բյուջետային հոդվածների ծախսմամբ, այլև համալսարանական գի-

³Կազմված է հեղինակների կողմից:


տակրթական գործունեությամբ: Սակայն, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր ՀՀ բուհերը հիմնականում կրթական ծառայություններ են մատուցում, սակավ ուշադրություն դարձնելով գիտահետազոտական աշխատանքների ծավալման, առավել ևս՝ դրանց արդյունքների վաճառահանման վրա:

Արդյունքում, տնօրինելով ֆինանսական լուրջ ռեսուրսների, հատկապես խոշոր բուհերը չեն նպաստում երկրում ձևավորվող ՀՆԱ-ում համալսարանական գործունեության տնտեսական հետևանքների տեսակարար կշռի ավելացմանը: Համեմատության համար նշենք, որ եվրոպական մի շարք երկներում համալսարանների կողմից իրականացվող հետազոտական գործունեությունը գրեթե կրթական ծառայությունների մատուցման համարժեք արդյունքն է ապառվում ՀՆԱ-ում (տես գծապատկեր 4), այն դեպքում, երբ ՀՀ-ում համալսարանների կողմից մատուցվող գիտահետազոտական արդյունքի չափաբաժինը ՀՆԱ-ի կազմում բազմակի զիջում է կրթական ծառայությունների համանուն ցուցանիշին:⁴

Նետևաբար, բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի ֆինանսական միջոցների մակրո կառավարման արդյունավետությունը գնահատելիս կարևորվում է բուհերի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների և կրթական ծառայությունների մատուցման չափաբաժինների համեմատական գնահատումները՝ ՀՆԱ-ի կազմում: Այս դեպքում հնարավորություն կստեղծվի մեկնաբանելու, թե որքանով են արդյունավետ կառավարվել բուհերի տնօրինած ֆինանսական միջոցները, ուղղորդվելով ոչ միայն կրթական, այլև հետազոտական ոլորտ: Միջազգային փորձը վկայում է, որ համալսարանները հանրության կողմից չեն դիտարկվում զուտ կրթօջախներ, այլև համարվում են գիտահետազոտական խոշոր կենտրոններ, որտեղ լուրջ ֆինանսական ռեսուրսներ են ծախսվում գիտության առաջընթացի համար:

⁴*Ճուղության Ա., Մխիթարյան Ա.*, Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, վերլուծական ձեռնարկ, հեղ. Հրատ., Եր., 2016, էջ 44

Գծապատկեր 4
Բարձրագույն կրթության և հետազոտությունների տեսակարար կշիռը
ՀՆԱ-ում 2013 թ. (%)⁵



Բուհերի ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը գնահատելիս կարևորվում է նաև դրամական հոսքերի դիֆերսիֆիկացման գործոնը: Ներկայումս, ՀՀ համալսարաններում դրամական ներհոսքերի հավաքագրման զգալի մասը բաժին է ընկնում առկա ուսուցմանը, և մնացած մասը՝ հեռակա կարգով ծառայությունների մատուցմանը: Սակայն, ՀՀ մասնագիտական կրթական շուկան փոքր լինելով, որոշակիորեն սրում է մրցակցային դաշտը և ներկայումս որոշ համալսարաններ, արդեն իսկ կանգնում են դիմորդների հավաքագրման հիմնախնդրի առջև: Նման պարագայում ֆինանսական ներհոսքերի դիվերսիֆիկացման պահանջ է ձևավորվում, մասնավորապես կազմակերպելով նաև համակարգչային հեռավար ուսուցում՝ մարզերում բնակվող ուսանողների համար, և նաև արտասահմանցի ուսանողների համար ուսուցում՝ օտար լեզուների հենքով կազմված կրթական ծրագրերով:

Այս առումով, առաջարկում ենք որպես համալսարանների ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը գնահատել նաև այլընտրանքային դրամական ներհոսքերի դիվերսիֆիկացման աստիճանը բնութագրող ցուցանիշներով (հանրային ֆինանսավորման, դրամաշնորհների, հոգաբարձուների կողմից ֆինանսական աջակցումների տեսակարար կշիռները դրամական ներհոսքերի կազմում), որով հնարավորություն կստեղծվի բնութագրելու բուհի ֆինանսական պաշարների ձևավորման ռիսկայնությունը

⁵The European Higher Education Area in 2014: Bologna Process Implementation Report, page 25

կրթական շուկայում մատուցվող ծառայությունների պահանջարկի տատանումների դեպքում:

Բուհերի ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը անհրաժեշտ է գնահատել նաև որակական առաջընթացը բնութագրող ցուցանիշներով (շրջանավարտի աշխատանքի անցնելու արագություն, կրթավճարների փոխհատուցման աշխատանքային տևողություն, կրթության որակի վարանիշավորում և այլն): Մասնավորապես, եթե համալսարանները ֆինանսական ներհոսքերը ամբողջովին օգտագործում են պարզապես կրթական ծառայությունների ծավալների ընդլայնմանը և շրջանցում են աշխատաշուկայի նորանոր պահանջներից բխող շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները, ապա ֆինանսների կառավարումը, անգամ ուսանողների քանակի ավելացմամբ պայմանավորված լրացուցիչ դրամական ներհոսքեր ապահովելիս՝ պետք է որոշակիորեն համարվի անարդյունավետ: Հետևաբար, կարևորվում է ֆինանսական ներդրումներից բխող ոչ միայն նյութական, այլև ոչ նյութական հատկյունները բնութագրող ցուցանիշների ընդդրվումը համալսարանական ֆինանսների կառավարման արդյունավետության գնահատման համակարգում (տես գծապատկեր 3):

Եվ վերջապես, բուհերի ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետության ցուցիչ է հանդիսանալու նաև հիմնավոր կրթավճարների սահմանումը: Ներկայումս, ՀՀ համալսարանները կրթավճարներ սահմանելիս առաջնորդվում են ոչ թե կրթական ծառայությունների մատուցման ինքնարժեքով կամ ծախսահատույցով, այլ դիմորդների պահանջարկով: Ի դեպ, այդ պահանջարկն էլ պայմանավորված չէ աշխատանքի շուկայում առկա սպասումների հետ, այլ ավելի շատ ձևավորվում է կոնկրետ ժամանակահատվածում “մոդայիկ” համարվող մասնագիտություններով: Եվ ստացվում է այնպես, որ կրթավճարների չափերը հաճախ համահունչ չեն կրթական ծառայությունների մատուցման ծախսերի ձևավորմանը, որն էլ հանգեցնում է համալսարանական ֆինանսական միջոցների ոչ նպատակային կառավարմանը:

Այսպիսով, բուհերի ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը անհրաժեշտ է կառուցել համապարփակ մոտեցմամբ, նրանում ընդգրկելով ինչպես ֆինանսական հոսքերի վերահսկողության գործիքազանգ, այնպես էլ համալսարանական գործունեության մրցունակության ամրապնդմանն ուղղած ֆինանսական ներդրումների հատույցը:

Арутюн Марзпаян, Ваан Геворкян - О методологии оценки эффективности управления финансовых средств вузов.- Методология управления финансов в университетах Армении в основном ограничивается функциями бюджетного контроля над движением денежных средств. В этой связи, в статье предлагается расширить методологию управления финансовыми ресурсами вузов, учитывая также материальные и не материальные отдачи финансовых внедрений в процессе образовательных услуг, что существенно повысит рыночную конкурентноспособность университетов.

Harutyun Marzpanyan, Vahan Gevorgyan - *About methodology for evaluating effectiveness management of university finance* - Finance management methodology in Armenian universities is mainly limited within the functions of budgetary control over cash flows. From this point, in the article is suggested enlargement of financial management methodology using in universities, considering well as material and not material consequences from financial investments in the process of educational services. That will essentially improve level of universities market compositeness.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

ՎԱՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կայուն ֆինանսավորում ունեցող բուհերը մրցունակ են համարվում կրթական շուկայում, քանի որ կարողանում են արագ արձագանքել գործատուների կողմից ներկայացվող նորանոր պահանջներին և կատարել կրթական ծառայությունների արդիականացմանը ուղղված անհրաժեշտ ներդրումներ: Հոդվածում քննարկվում են ՀՀ բուհերի ֆինանսական կայունության կառավարման բարեփոխումների ուղիներ, որոնք կնպաստեն կրթության շուկայում դրանց մրցակցային դիրքերի ամրապնդմանը:

Բանալի բառեր. կրթության ֆինանսավորում, դրամական ներհոսքեր, կրթության շուկա, ֆինանսական կառավարում:


Մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումը ֆինանսական կայունություն է պահանջում բուհերից, որի ապահովումը նոր մարտահարավերներով է հանդես գալիս համալսարանների կառավարման համակարգում: ՀՀ պետական բուհերը հանդես գալով որպես պետական ոչ առևտրային միավորներ, միևնույն է, ներկայումս իրենց գործունեությունը ամբողջապես չեն ֆինանսավորում հանրային միջոցների հաշվին և ուսանողների շուրջ երկու երրորդից կրթավճարներ են գանձում, իսկ մասնավոր բուհերը՝ ամբողջությամբ են գործում կրթավճարների հաշվին:

Սակայն մյուս կողմից, Բոլոնիայի գործընթացը, որին անդամակցում է նաև մեր հանրապետությունը, իր առջև խնդիր է դնում հնարավորինս հանրային ֆինանսներով մասնագիտական կրթություն կազմակերպելու: Այսպես, Լյուվեն/Լուվեն-լա-Նյուվի կոնֆերանսում հստակ ընդգծվեց բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների ներկա փուլում կրթության նկատմամբ հանրային պատասխանատվության աստիճանի կարևորությունը: Այս շրջանակներում, բնականաբար, պետական ֆինանսավորումը մնում է հիմնական գերակայություն՝ ինչպես երաշխավորելու արդար մուտքը դեպի ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատություններ, այնպես էլ օժանդակելու դրանց հետագա կայուն զարգացմանը:¹

Չնայած վերոնշյալ հանգամանքի, համալսարանական կրթական համակարգի ֆինանսական կայունությունը ՀՀ-ում դեռևս էապես պայմանավորվում է մասնավոր աղբյուրներով, որը բուհի կառավարման առջև առանձնահատուկ պահանջներ է ներկայացնում: Ներկայումս, կրթական ծառայությունների մատուցումը որոշակիորեն մեկնաբանվում է նաև գործարարության տեսանկյունից, չնայած որ մասնագիտական կրթությունը գտնվում է հանրային շահերի կիզակետում և կարծես թե, չպետք է բիզնեսի ֆինանսական կառավարման կանոններով կարգավորումների ենթարկվի:

¹Եվրոպական երկրների բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանսի հռչակագիր, կետ 22, ապրիլ 28-29, Լյուվեն/Լյուվեն-լա Նյուվ, 2009

Գծապատկեր 1
Բոլոնիայի գործընթացի հիմնական շարժառիթները¹




Այնուամենայնիվ, կրթությունը համարվելով է մարդկային կապիտալի ձևավորման հիմնական գործոն, աստիճանաբար տեղափոխվում է շուկայական ոլորտ և է մեկնաբանվում է նաև որպես գործարարություն: Այսպես, արտասահմանյան ուսանողների ներգրավմամբ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան համարվում են առաջատարներ և կրթավճարների խոշոր ներհոսքեր են ապահովում եվրասիական երկրներից: Հետևաբար, անգամ Բոլոնիայի գործընթացի հովանու ներքո բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ձևավորումը ի գործ է մրցունակության առումով արդյունավետորեն արձագանքելու համաշխարհային մարտահրավերներին, եթե դիտարկում է կրթական ծառայությունների մատուցման տնտեսական շահը (տես գծապատկեր 1):

Հայաստանի Հանրապետությունը դեռևս մրցակցային դիրքեր չի գրավում միջազգային կրթական շուկայում, սակայն ելնելով սովորողների կրթական երկարատև ժամանակահատվածից (բակալավրիատում՝ մինչև չորս տարի), մեր երկրում գործող բուհերի կողմից մատուցվող կրթական ծառայությունները ժամանակային կտրվածքով կայունություն են պահանջում, որն էլ իր հերթին հավաքարաններում ենթադրում է անհրաժեշտ դրամական ներհոսքերի և ֆինանսական պաշարի ձևավորում: Այդ են վկայում նաև վերջին տարիների զարգացումները, երբ ուսանողների թվաքանակի կրճատման պատճառով ՀՀ բուհերը չեն կարողանում ապահովել անհրաժեշտ ֆինանսական կայունության պաշար, և այդ իսկ պատճառով էլ հիմնականում լուծարվում են (տես գծապատկեր 2):

¹ *Երիցյան Ս., Ճուղուրյան Ա.*, Բոլոնիայի գործընթացի հետազոծը, Եր., Էդիթ Պրինթ, Եր. 2015, էջ 18,

Գծապատկեր 2.
ՀՀ բուհերի քանակի և նրանցում սովորող ուսանողների
համակազմի դինամիկան¹



Ֆինանսական կայունության կառավարումը մեր կողմից առաջարկվում է բուհերում իրականացնել դրամական հոսքերի հաշվեկշիռների ներկայացման միջոցով, որոնք արտացոլում են դրամական ներհոսքերի ապահովվածությունը՝ ըստ ֆինանսավորման ուղղությունների: Այս պարագայում, բուհերի ֆինանսական պաշարը գնահատվում է կայուն, եթե տարվա կտրվածքով դրամական ներհոսքերը առաջանցիկ բնույթ են կրում արատահոսքերից: Մակայն այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ կատարվեն նաև դրամական հոսքերի համադրումներ՝ ըստ խմբային նշանակման (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1
Ֆինանսական կայունության պաշարի ձևավորման հաշվեկշիռ²

Տնօրինվող դրամական միջոցներ	Նշանակում	Ծախսվող դրամական միջոցներ	Նշանակում
Դրամական միջոցների սկզբնական մնացորդները ուսումնական տարվա սկզբին	C ₁	Դրամական միջոցների վերջնական մնացորդները ուսումնական տարվա սկզբին	E ₁
Կրթավաճառներ և պետպատվերի ֆինանսավորում	C ₂	Ընթացիկ կրթական ծառայությունների ֆինանսավորում	E ₂
Դրամաշնորհներ և հետագոտական	C ₃	Գիտահետազոտական աշխատանքների	E ₃

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր. 2015, էջ 124

² Կազմվել է հեղինակի կողմից:

արդյունքների առևտրայ- նացում		Ֆինանսավորում	
Նվիրատվություններ և հոգաբարձուների կողմից ներդրումներ	C ₄	Նպատակային հատուկ ծրագրերի ֆինանսավորում	E ₄
Հաշվեկշիռ	Σ C	Հաշվեկշիռ	Σ E

Այսպես, նպատակահարմար ենք համարում բուհերի ֆինանսական կայունությունը գնահատելիս կատարել հետևյալ որակական գնահատումները.

- ֆինանսական պաշարների ձևավորման բացարձակ կայունություն, երբ.

$$\begin{cases} C_1 < E_1 \\ C_2 > E_2 \\ C_3 > E_3 \end{cases}$$

$$C_4 > E_4$$

- ֆինանսական պաշարների ձևավորման ընդհանրացված կայունություն, երբ.

$$\Sigma C > \Sigma E$$

- ֆինանսական պաշարների ձևավորման անկայուն իրավիճակ, երբ.

$$\begin{cases} C_1 > E_1 \\ C_2 < E_2 \\ C_3 < E_3 \end{cases}$$

$$C_4 < E_4$$

Բնականաբար, ցանկացած բուհ կձգտի ֆինանսական պաշարների ձևավորման բացարձակ կայունության, որի պարագայում համալսարանական գործունեության ոլորտում ձևավորվում է մի իրավիճակ, երբ ֆինանսավորման յուրաքանչյուր ուղղությունն ապահովված այդ նպատակով իրականացվող դրամական ներհոսքերով: Սակայն, գործնականում նման իրավիճակի ձևավորումը հայաստանյան բուհերում դժվար իրագործելի է, քանի որ այլըն-տրանքային ֆինանսավորումը (դրամաշնոհներ, հոգաբարձուների ներդրումներ, նվիրատվություններ) համալսարանական գործունեության դրամական ներհոսքերում զգալի տեսակարար կշիռ չեն կազմում: Հետևաբար, բուհերը փորձում են գործունեության անխափանություն ապահովել ֆինանսական պաշարների ընդհանրացված կայունության պարագայում, որը չի կարող արդյունավետ կառավարման համակարգ ստեղծել: Ավելին, նման կառավարումը ձևավորվում է ֆինանսական պաշարների անկայուն իրավիճակ, որը ի վերջո հանգեցնում է բուհերի լուծարման:

Հետևաբար, համալսարանական գործունեության ֆինանսական կառա-վարումը արդյունավետ է գնահատվում այն դեպքում, երբ արձանագրվում է

նպատակային դրամական ներհոսքերի կայուն առաջանցիկություն՝ թիրախավորված արտահոսքերի նկատմամբ: Այս պարագայում աճում է բուհերի ֆինանսական կայունության պաշարը: Իսկ ուսումնական տարվա սկզբի դրությամբ՝ դրամական միջոցների վերջնական մնացորդի ավելացումները թույլ են տալիս որակական նոր բաղադրիչներով հաջորդիվ կրթական ծառայություններ մատուցել:

Ваан Геворкян- Проблемы управления финансовой устойчивости вузов РА-

В статье анализируются финансовые проблемы в образовательной системе вузов Армении, и на этой основе предлагаются пути улучшения финансового менеджмента образовательских услуг. В частности, обосновывается составление баланса денежных потоков с целью ситуационной оценки финансового положения вуза. Считается также целесообразным организация сопоставительного анализа резервирования денежных средств вузов в течении учебного года.

Vahan Gevorgyan -Financial stability management issues in universities RA- The article analyzes the financial problems in the educational system of universities of Armenia, and on this basis, suggests ways of improving financial management of education supplying services. In particular, is corroborating compilation of balance of cash flows for the purpose of situational assessment of the university's financial position. It is also appropriate organization benchmarking reservation of funds in high schools throughout the school year.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՌԻԴԻՏԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՆԱԹՅԱՆ

Կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքները ավանդաբար հրապարակվել են ֆինանսական (հաշվապահական) հաշվետվություններով, որտեղ ընդգրկվել են տնտեսավարման ռեսուրսներն ու դրանց օգտագործման ֆինանսական հետևանքները: Սակայն, ներկայումս գործարարության ռեսուրսների ձևավորման գործընթացում տնտեսականից բացի, հետզհետե նշմարվում է նաև բնապահպանական գործոնը: Տնտեսության բուռն զարգացումն ուղեկցվում է բնական ռեսուրսների ակտիվ շահագործմամբ, շրջակա միջավայրի աղտոտմամբ, մարդուն ու բնությանը սպառնացող էկոլոգիապես անհարիր սպառման ապրանքների թողարկմամբ: Հետևաբար, շահույթի ստացման ճանապարհին գործարարությունը տնտեսական ռեսուրսներից բացի, կամա թե ակամա սպառում է նաև շրջակա միջավայրի ռեսուրսներ, որոնց գծով անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար կազմակերպելու բնապահպանական աուդիտ:

Բանալի բառեր. գործարարության կայուն զարգացում, բնապահպանական վնասներ, էկոլերահսկողություն, բնապահպանական հաշվետվություններ

Վերջին տարիներին բնապահպանական աուդիտի իրականացման անհրաժեշտությունը առավելապես առաջ է քաշվում խոշոր ներդրումային և վարկային գործարքների ժամանակ: Առաջին հերթին այդ պահանջը դրվում է Վերականգնման և զարգացման Եվրոպական, ինչպես նաև Զարգացման միջազգային բանկերի միջոցներով ներդրումներ կատարելիս: Խոշոր բաժնետիրական ընկերություններից բնապահպանական աուդիտորական եզրակացություն են պահանջում նաև եվրոպական մի շարք բորսայական շուկաներ: Նպատակը մեկն է, ելնելով բաժնետերերի շահերի պաշտպանությունից պարզել, թե որքան են ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունները ապահովագրված բնապահպանական վնասներից և ինչպիսին է դրանց ֆինանսատնտեսական կայունության վրա բնապահպանական գործոնի ազդեցության ռիսկի մեծությունը:

Հետևաբար, դեռևս գործնականում առվելապես զարգացում է ստանում ֆինանսաէկոլոգիական աուդիտը, որի նպատակը հրապարակվող ֆինանսական հաշվետվություններում հնարավորինս բնապահպանական տեղեկատվության արտացոլումն ու դրա արժանահավատության ստուգումն է, բնապահպանական «թաքցրած ծախսերի և պարտավորությունների» բացահայտումն, ինչպես նաև հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների հավելվածում ներկայացված կազմակերպությունների բնապահպանական քաղաքականության մեկնաբանումը:

Այսպիսով բնապահպանական աուդիտը գործնականում ներկայանում է որպես.

- ռիսկերի կառավարման գործիք, որով հնարավորություն է ստեղծվում հնարավորինս կանխարգելել բնապահպանական ազդեցությունը կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա,

- տեղեկատվական համակարգ, որով հասարակությանը ծանոթանում է կազմակերպության բնապահպանական գործունեության արդյունքներին,
- բնապահպանական սահմանված չափորոշիչներից կազմակերպությունների փաստացի գործունեության շեղումների բացահայտման և գնահատման համակարգ:

Սակայն բնապահպանական աուդիտի խնդիրները տեսականորեն առավել բազմաբնույթ են, քան ներկայումս կիրառվում են գործնականում: Չափորոշիչների միջազգային կազմակերպությունը արդեն գործողության մեջ է դրել բնապահպանական աուդիտի իրականացման նորմատիվները ISO 14000 սերիայով: Սկսած 1995 թվականից, գործողության մեջ դրվեց նաև EMAS ծրագիրը, որը կարգավորում է կազմակերպությունների բնապահպանական գործունեությունը, պահանջում էկոմենջմենթի կազմակերպում: EMAS ծրագրին մասնակցող կազմակերպությունների արտադրանքը հատուկ պիտակավորում է ստանում, որով դրանք առավելություն են ստանում և մրցունակ դառնում իրացման շուկաներում՝ ձեռքբերելով էկոլոգիապես մաքուր թողարկման համբավ: Համաձայն EMAS ծրագրի, էկոմոնիտորինգին զուգահեռ, կազմակերպություններից պահանջվում է նաև էկոաուդիտի իրականացում:¹

Հարկ է նշել նաև, որ բնապահպանական աուդիտը գործունեության առավել լայն շրջանակներ ունի և չի կրկնօրինակում էկովերահսկողությանը կամ մոնիտորինգին: Վերջիններիս գործառույթները սահմանափակվում են բնապահպանական նորմերի ապահովման վերահսկողությամբ՝ կիրառելով վարչական լծակներ: Բնապահպանական աուդիտը ոչ թե վերահսկողական, այլ առավելապես կառավարչական ֆունկցիա է իրականացնում, իր գործունեության շրջանակներում ընդգրկելով էկոտեղեկատվության հավաքագրումը դրա հիման վրա շրջակա միջավայրի վրա գործարարության ազդեցության ռիսկերի մեղմացումը:

Բնապահպանության աուդիտը իր գործառույթներով տարբերվում է նաև ֆինանսական աուդիտից: Վերջինս հիմնականում ուսումնասիրման օբյեկտ է համարում տնտեսավարման հաշվապահական ընդգրկուն տեղեկատվությունն ու հաշվետվությունը, որն առնչվում անցած (հաշվետու) ժամանակաշրջանին:² Բնապահպանական աուդիտի կողմից ուսումնասիրվող խնդիրները առավել ընդգրկուն են և առնչվում են շրջակա միջավայրի պահպանման կառավարմանը՝ օպերատիվ, մարտավարական և ռազմավարական տեղեկատվական մակարդակներով: Բնապահպանական աուդիտը, ի տարբերություն ֆինանսականի, ծառայում է ոչ այնքան կազմակերպությունների կողմից բնօգտագործման հաշվետվությունների հավաստիության ստուգմանը, որքան էկոմենջմենթի բարելավմանը և էկովնասներից առաջացող ռիսկերի մեղմանը, ինչպես նաև արդյունավետ բնապահպանական քաղաքականությամբ լրացուցիչ օգուտների ստացմանը:

Համաձայն Միջազգային առևտրային պալատի կողմից տրված սահմանման, էկոաուդիտը ներկայացվում է որպես կառավարման համակարգ, որը հիմնվելով բնապահպանական գործունեության փաստաթղթավորման և հաշվետ-

¹ **Šku**, http://ec.europa.eu/environment/emas/index_en.htm

² **Šku**, <http://hayaudit.com>

վության վրա, գնահատում է կազմակերպության որդեգրած բնապահպանական քաղաքականության համապատասխանությունը փաստացի իրավիճակին: Բնապահպանական աուդիտի ուսումնասիրման օբյեկտը ոչ այնքան կազմակերպությունների բնապահպանական հաշվետվությունների հավաստիությունն է, որքան բնապահպանական գործունեությունը իր հետևյալ դրսևորումներով.

- բնապահպանական քաղաքականության գնահատում,
- բնապահպանության նպատակների և խնդիրների հիմնավորում,
- շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելող վերահսկողություն և մոնիտորինգ,
- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման վերահսկողություն,
- բնապահպանական անվտանգության ապահովում և էկովթարների առաջացման ռիսկի գնահատում,
- բնապահպանական տեղեկատվության մատուցում և աջակցություն էկոլրթությանը,
- տնտեսական գործունեության համակարգում էկոտնտեսական վնասների, ինչպես նաև էկոիրավական տուժերի առաջացման ռիսկերի գնահատում,
- պետական բնապահպանական վերահսկողության և արտոնագրման ծառայությունների հետ համագործակցում:¹

Ի տարբերություն ֆինանսական աուդիտի, բնապահպանական աուդիտի իրկանացումը բարդանում է նաև նրանով, որ կազմակերպությունների կողմից ներկայացվող բնապահպանական հաշվետվությունը հիմնական ոչ լիարժեք և արժանահավատ են: Այսպես, փորձագետների գնահատմաբ, պետական վիճակագրական հաշվետվություններում ներկայացվում են շրջակա միջավայրը աղտոտող արտանետումների միայն 15-20%-ը:² Ցանկացած պաշտոնապես հրապարակված հաշվետվությունում կազմակերպությունները ձգտում են թաքցնել իրենց տնտեսավարման ազդեցության վնասները շրջակա միջավայրի վրա, փորձում են հնարավորինս չարձանագրել իրենց ստանձնած բնապահպանական պար-տավորությունները կամ չմեկնաբանել վարվող բնապահպանական քաղաքականությունը:

Ինչ խոսք, որ նման սուղ և երբեմն ոչ արժանահավատ տեղեկատվության պայմաններում բարդանում է էկոաուդիտի իրականացումը: Այնինչ, բնապահպանական աուդիտի իրականացման շնհորիվ կազմակերպություններում կարող են լուծվել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են.

- կազմակերպության բնապահպանական քաղաքականության հիմնավորումը,
- բնապահպանական գործունեության առաջնահերթ ուղղությունների որոշումը,
- բնապահպանական արտակարգ իրավիճակների կանխման միջոցառումների հիմնավորումը,
- բնական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատումը,

¹ Чуйкова Л. Ю., Экологических аудит, М. Финансы, 2014, стр. 26-27

² Глухов Т.П., Некрасова Т.П., Экономические основы экологии, изд-во "Питер", 2013, стр.127

➤ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վրա բնապահպանական արդյունքերի գնահատումը (պոտենցիալ էկոպարտավորություններ, խոշորածավալ բնապահպանական ակտիվների ակնկալվող ձեռքբերումներ, բնապահպանական տուժ և տուգանքների սպառնալիքներ):

Բնապահպանական աուդիտը իր գործառնություններով տարբերվում է նաև պետական բնապահպանական վերահսկողությունից: Վերջինս իրականացվում է պետական մարմինների կողմից և նպատակ է հետապնդում վերահսկելու կազմակերպությունների կողմից բնապահպանական օրենսդրության պահանջներին կատարումը: Պետական բնապահպանական վերահսկողությունը պարտադիր է և կանոնակարգված համապատասխան իրավական ակտերով: Բնապահպանական աուդիտը ձեռնարկատիրական գործունեություն է և կազմակերպվում է արտոնագրված իրավաբանական անձանց կողմից՝ շահույթ ստանալու նպատակով:

Ի տարբերություն բնապահպանական պետական վերահսկողական մարմինների, աուդիտը կազմակերպություններում առավելապես իրականացվում է ոչ թե բնապահպանական օրենսդրության պահանջների իրականացումը ստուգելու, այլ բնապահպանական մենեջմենթի արդյունավետության ռեզերվների բացահայտման նպատակով: Որպես կանոն, բնապահպանական աուդիտը կամավոր սկզբունքներով է իրականացվում և խիստ կանոնակարգված բվույթ չի կրում:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ի տարբերություն ֆինանսական գործունեության աուդիտ իրականացնող մասնագիտացված ֆիրմաների, բնապահպանական աուդիտը մի շարք պատճառներով դեռևս չի իրականացվում մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

Բնապահպանական աուդիտորական մասնագիտացված ֆիրմաների բացակայության պատճառները բազմաբնույթ են: Սակայն առկա են հիմնական գործոններ, որոնք գործնականում շարժառիթ չեն հանդիսանում մասնագիտացված բնապահպանական աուդիտորական ֆիրմաների ձևավորման համար:

Առաջին, աուդիտորական գործունեության չափորոշիչների բացակայությունը: Եթե ընդունված է օրենք ֆինանսական աուդիտի մասին և գործողության մեջ են դրված աուդիտորական չափորոշիչները, ապա ոչ միայն ՀՀ-ում, այլ անգամ զարգացած արդյունաբերական երկրներում չեն գործում բնապահպանական աուդիտի իրականացման չափորոշիչներ:

Երկրորդ, բնապահպանական աուդիտի օրենսդրական պահանջի բացակայությունը: Հիմնականում, կազմակերպությունների բնապահպանական գործունեության կարգավորումը սահմանափակվում է օրենքով պարտադրվող բնապահպանական տեսչությամբ և մոնիտորինգով: Սակայն, բնապահպանական օրենսդրությունը հիմնականում պահանջ չի դնում էկոաուդիտի անցկացման վերաբերյալ:

Երրորդ, հասարակության անտեղյակությունը բնապահպանական աուդիտի գոյության և գործառնությունների մասին: Եթե անգամ տեղեկատվություն են պահանջում կազմակերպությունների էկոիրավիճակի վերաբերյալ, ապա որպես կանոն այն տրամադրվում է բնապահպանական պետական վերահսկողության մարմինների կողմից և պահանջ չի դրվում բնապահպանական տեղեկատվության հավաստիության անկախ աուդիտորական եզրակացության ստացման գծով:

Հետևաբար, երբ կազմակերպությունները սկսեն պարբերաբար հրապարակել իրենց էկոիրավիճակը բնութագրող հաշվետվություններ, ապա անկախ աուդիտորական եզրակացության տրամադրումը ուղղակիորեն կդառնա հասարակական պահանջ, իսկ բնապահպանական աուդիտորական մասնագիտացված ֆիրմաները հանդես կգան որպես հրապարակված տեղեկատվության արժանահավատության երաշխիքի կրողներ:

Арутюн Халатян - Проблемы методологии экологического аудита.- Охрана окружающей среды является неотъемлемой частью бизнес деятельности, что и вынуждает к проведению экологического аудита на предприятиях. Между тем, бизнес единицы прибегают в основном финансовому аудиту, что не в полной мере раскрывает экологические обязанности предпринимателей. В статье обсуждаются пути активизации экологического аудита и тем самым анализируются методологические проблемы аудиторского контроля в сфере деятельности предприятий.

Harutyun Khalatyan- *Problems of methodology of environmental audit.* - Environmental protection is an integral part of business activity, which forces to conduct an environmental audit at the enterprises. Meanwhile, the business units have resorted mainly financial audit, that did not fully disclose the environmental responsibilities of business. The article discusses ways to enhance environmental audit and thus analyzes the methodological problems of audit control in the sphere of activity of the enterprises.

ՌԻՍԿԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՆԿԵՐՈՒՄ

ՆԱԲԵԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Կառավարչական որոշումների գործընթացը անհրաժեշտ է կազմակերպել բանկային ռիսկերի կառավարման գծով նպատակադրված արդյունքների և դրանցից արձանագրված շեղումների վերլուծությունների հենքով, որով հնարավորություն է ստեղծվում ներդաշնակեցնելու մարտավարական և ռազմավարական որոշումների կայացումը: Այս առումով խնդիր է դրվում նորովի ներկայացնելու ֆինանսական ռիսկերի կառավարման հաշվետվողականություն, որն իր մեջ ներառում նաև որոշումների կայացման արդյունավետության գնահատումներ ոչ միայն ըստ բանկային առանձին տեղաբաշխված ակտիվների, այլև ռիսկերի կառավարման գործիքների կիրառման առանձնահատուկ ուղղությունների:

Բանալի բառեր. ֆինանսական ռիսկեր, բալային համակարգ, վարկանիշային սանդղակներ, ռիսկերի բազմագործոնային գնահատումներ

Ֆինանսական ռիսկերի գծով կառավարչական որոշումներ ընդունելիս ոչ միայն անհրաժեշտ է դառնում բացահայտելու առավելագույն նպատակադրումներից կառավարման յուրաքանչյուր գործիքի կիրառման արդյունքների շեղումները, այլև գնահատելու տեղաբաշխված յուրաքանչյուր ակտիվի գծով ռիսկերի կառավարման արդյունավետությունը: Որպես կանոն, բանկերի կողմից տեղաբաշխված ակտիվները ունեն ռիսկայնության տարբեր աստիճաններ, ուստի և դրանց առնչվող ռիսկ մենեջմենթը տարբեր գործիքակազմեր է կիրառում:¹

Այս առումով, յուրաքանչյուր առևտրային բանկ ցանկանում է գնահատել ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետությունը տեղաբաշխված յուրաքանչյուր ակտիվի գծով: Բնականաբար, նման գնահատումները ոչ միայն աշխատատար են, այլև սուբյեկտիվ տարբեր են պարունակում:² Ելնելով դրանից, մասնագիտական գրականությունում առաջարկվում է բանկային ռիսկերի վերահսկողության և ներքին աուդիտի գծով կիրառել վարկանիշային համակարգ, որը գործնականում թույլ է տալիս որոշելու, թե տեղաբաշխված կոնկրետ ակտիվին առնչվող ֆինանսական ռիսկերը կառավարման ինչպիսի մակարդակ և դիրք ունեն այդ նպատակով ձևավորվող ներբանկային վարկանիշային աղյուսակում:³

Սակայն մյուս կողմից, կառավարման արդյունավետության վարկանիշավորումը բարդ գործընթաց է, որին ցանկացած առևտրային բանկ իր կողմից մշակված մեթոդաբանական մոտեցումները կարող է առաջարկել, ընդհուպ

¹ *Шульгин, А. В.* Внутренний контроль и управление рисками в коммерческом банке / А. В. Шульгин // Финансы и кредит. 2001. – №17. С. 22-40

² Учет и аудит в банках: Учебник / *АМ Герасимович, ЛМ Киндрацкя, ТВ Кривовяз и др.*; Под общ ред проф АМ Герасимовича - К: КНЕУ, 2005, стр. 412

³ Аудит банков, учеб. пособ.. под ред. *М.А. Суркова*, Ульяновский государственный технический университет, Ульяновск, 2009, стр. 74-76

մինչև մաթեմատիկական մոդելավորումը:⁴ Մեր կողմից, այդ գործընթացի կազմակերպումը առաջարկվում է իրականացնել առավել պարզեցված ընթացակարգով, կիրառելով “հեռավորությունների վերլուծության” եղանակը: Բանկային ռիսկերի գծով որոշումների կայացման արդյունավետության վարկանիշային սանդղակը նման պարագայում առաջարկում ենք կազմել հետևյալ քայլերով:

Առաջին քայլ. կատարվում է առևտրային բանկերի կողմից տեղաբաշխված ակտիվների ընտրություն և յուրաքանչյուր ակտիվին վերագրվում է ֆինանսական ռիսկերի կառավարման գծով կիրառված կոնկրետ գործիքին ներքին աուդիտի կողմից ամրագրված բալր: Այսպես, աղյուսակ 1-ում առևտրային բանկի կողմից տեղաբաշխված ակտիվների ռիսկերի կառավարման 9 գործիք է ներկայացված, որոնցից յուրաքանչյուրի կիրառելիության փաստացի և նախանշված առավելագույն արդյունավետության աստիճանը գնահատվում է ներքին աուդիտի կողմից:

Աղյուսակ 1
Ֆինանսական ռիսկերի կառավարման գործիքների կիրառման
առավելագույն փաստացի բալերը⁵

Նշա- նա- կում	Կառավարման գործիքակազմը և ուղղությունը	Առա- վելա- գույն բալեր	Տեղաբաշխված ակտիվներ				
			“a”	“b”	“c”	“d”	“e”
X ₁	Կառավարելի ռիսկերի բացահայտում	13	11	13	9	7	10
X ₂	Մասամբ կառավարելի ռիսկերի բացահայտում	5	4	3	2	4	5
X ₃	Անկառավարելի ռիսկերի բացահայտում	5	3	6	7	5	4
X ₄	Հնարավոր վնասների փոխհատուցման պահուստների ձևավորում	5	4	3	4	2	3
X ₅	Շեղումների վերլուծություն	12	10	12		8	
X ₆	Կանխարգելիչ գործառույթներ	28	21	24	22	23	0
X ₇	Որոշումների մոնիտորինգ	9	6	8		5	
X ₈	Որշումների արդյունավետության գնահատում	15	7	6	13	9	2
X ₉	Հաշվետվողականություն	6	5	6	4	3	4

Երկրորդ քայլ. տեղաբաշխված կոնկրետ ակտիվի ֆինանսական ռիսկերի կառավարման ուղղությամբ փաստացի բալային գնահատումները համեմատու-

⁴ *Ebrahim Hoseininassab*, Effects of risks parametrs (Credit, Operetional, Liquidity and Market Risks) on banking system efficiency, Iranian Economic Review, Vol. 17, No.1, 2013, pp. 8-12
⁵ Աղյուսակներ 1-ից 5-ը կազմված են հեղինակների կողմից:

թյան մեջ են դրվում մյուս ակտիվների գծով համապատասխան գնահատումների հետ և ընտրվում է առավելագույն մեծությունը (տես աղյուսակ 2): Այսպես, կառավարելի ռիսկերի բացահայտման գործիքակամը (X₁) առավել արդյունավետ է օգտագործվել առևտրային բանկի կողմից տեղաբաշխված “b” ակտիվի գծով, իսկ ռիսկերի կառավարման գծով հաշվետվողականության լիարժեքությունը (X₉) ապահովվել է “e” ակտիվի գծով, քանի որ դրանք տեղաբաշխված մյուս ակտիվների համեմատության շրջանակում ունեցել են առավելագույն բալերը:

Աղյուսակ 2

Տեղաբաշխված յուրաքանչյուր ակտիվին վերագրված ֆինանսական ռիսկերի կառավարման գործիքներին ներքին աուդիտի կողմից ամրագրված բալը

Նշանակում	Տեղաբաշխված ակտիվներ				
	“a”	“b”	“c”	“d”	“e”
X ₁	11	13	9	7	10
X ₂	4	3	2	4	5
X ₃	3	6	7	5	4
X ₄	4	3	4	2	3
X ₅	10	12	9	8	7
X ₆	21	24	22	23	20
X ₇	6	8	7	5	9
X ₈	7	6	13	9	12
X ₉	5	2	4	3	4

Երրորդ քայլ. որոշվում է “փաստացի առավելագույն” մակարդակից ռիսկերի կառավարման յուրաքանչյուր գործիքի կիրառման բալային գնահատման հեռավորությունը (տես աղյուսակ 3): Այսպես, եթե կառավարելի ռիսկերի բացահայտումների գծով առավելագույն մակարդակ է արձանագրվել “b” ակտիվի գծով, ապա այդ ուղղությամբ “a” գործոնի հեռավորությունը կկազմի 0,846 (11/13), իսկ “c” գործոնի գծով` 0.629 (9/13): Բնականաբար, “b” գործոնի գծով այդ ցուցանիշի մեծությունը կկազմի 1.0

Չորրորդ քայլ. կատարվում են հաշվարկված շեղումների ճշգրտումներ, հաշվի առնելով յուրաքանչյուր գործիքի կշիռը ֆինանսական ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգում (տես աղյուսակ 4): Այսպես, եթե ներքին աուդիտի կողմից առևտրային բանկի գործունեության ֆինանսական ռիսկերի կառավարման գործիքակազմին ընդհանուր վերագրվել է 100 բալ, ապա կանխարգելիչ գործառույթները իրենց 28 առավելագույն բալով հանդես կգան որպես ամենամեծ կշիռ ունեցող գործոն, իսկ հնարավոր վնասների փոխհատուցման պահուստների ձևավորումը (5 բալ), ինչպես նաև անկառավարելի ռիսկերի բացահայտումը (5 բալ) կներակայանան որպես ամենափոքր կշիռ ունեցող գործոններ (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 3

Ֆինանսական ռիսկերի կառավարման յուրաքանչյուր գործիքի կիրառման արդյունքի հեռավորությունը՝ համեմատվող փաստացի ձեռքբերումից

Նշանակում	Տեղաբաշխված ակտիվներ				
	“a”	“b”	“c”	“d”	“e”
X ₁	0.846	1.0	0.629	0.636	0.769
X ₂	0.8	0.6	0.4	0.8	1.0
X ₃	0.428	0.857	1.0	0.714	0.571
X ₄	1.0	0.75	1.0	0.5	0.75
X ₅	0.833	1.0	0.75	0.666	0.853
X ₆	0.875	1.0	0.916	0.958	0.833
X ₇	0.666	0.888	0.777	0.555	1.0
X ₈	0.538	0.461	1.0	0.629	0.923
X ₉	1.0	0.4	0.8	0.6	0.8

Աղյուսակ 4

Ֆինանսական ռիսկերի կառավարման յուրաքանչյուր գործիքի կիրառման արդյունքի ճշգրտումը համապատասխան կշռով

Գործոնի կշռը	Տեղաբաշխված ակտիվներ				
	“a”	“b”	“c”	“d”	“e”
X ₁ 0.13	0,10998	0,13	0,08177	0,08268	0,09997
X ₂ 0.05	0,04	0,03	0,02	0,04	0,05
X ₃ 0.05	0,0214	0,04285	0,05	0,0357	0,02855
X ₄ 0.05	0,05	0,0375	0,05	0,025	0,0375
X ₅ 0.12	0,09996	0,12	0,09	0,07992	0,10236
X ₆ 0.28	0,245	0,28	0,25648	0,26824	0,23324
X ₇ 0.09	0,05994	0,07992	0,06993	0,04995	0,09
X ₈ 0.15	0,0807	0,06915	0,15	0,09435	0,13845
X ₉ 0.06	0,06	0,024	0,048	0,036	0,048
Հանրագումար	0,767	0,813	0,816	0,712	0,828

Հաշվի առնելով ֆինանսական ռիսկերի կառավարման յուրաքանչյուր գործիքի կշիռը, ճշգրտվում են հաշվարկված արդյունքների հեռավորությունը համեմատվող փաստացի ձեռքբերումից: Այսպես, X₁ գործոնի ցուցանիշները տեղաբաշխված ակտիվների գծով 0.13 գործակցով ճշգրտված հանդես են գալիս հետևյալ կերպ.

$$0.846 \times 0,13 = 0,1095 \quad 1,0 \times 0,13 = 0,13 \quad 0,636 \times 0,13 = 0,0817 \quad 0,769 \times 0,13 = 0,0999$$

Հինգերորդ քայլ. հիմք ընդունելով աղյուսակ 4-ի տվյալները, կազմվում է ֆինանսական ռիսկերի գծով որոշումների կայացման արդյունավետության վարկանիշային սանդղակ: Փաստորեն, որքան հաշվարկված շեղումների հանրագումարը ձգտում է 1,0-ի, այնքան տվյալ տեղաբաշխված ակտիվին առնչվող ֆինանսական ռիսկերի կառավարչական որոշումների արդյունավե-

տույթունը մոտենում է առևտրային բանկի կողմից մեկ այլ ակտիվի ռիսկերի գծով իրականացված կառավարչական որոշումների լավագույն մակարդակին:


Այսպես, ֆինանսական ռիսկերի գծով որոշումների կայացման արդյունավետության վարկանիշային սանդղակը ցույց է տալիս, որ առևտրային բանկում սարքավորումների լիզնգի ռիսկերի կառավարչական որոշումների կայացումը առավել արդյունավետ է իրականացվել վերլուծվող ժամանակաշրջանում տեղաբաշխված մյուս ակտիվների նկատմամբ (տես աղյուսակ 5): Իսկ երկարաժամկետ գյուղատնտեսական վարկերի ֆինանսական ռիսկերի գծով կառավարչական գործիքակազմի կիրառման փաստացի արդյունավետությունը տեղաբաշխված մյուս ակտիվների նկատմամբ առավել նվազն է, ուստի այդ վարկերի ռիսկերի մենեջմենթը հայտնվել է ներբանկային վարկանիշային աղյուսակի վերջին հորիզոնականում:

Աղյուսակ 5
Ֆինանսական ռիսկերի գծով որոշումների կայացման արդյունավետության վարկանիշային սանդղակ

Վարկանիշը	Տեղաբաշխված ակտիվներ	Ճշգրտված շեղումների հարաբույժ
1	“e” – սարքավորումների լիզինգ	0,828
2	“c” – կենցաղային վարկ	0,816
3	“b” – գյուղատնտեսական վարկ	0,813
4	“a” – միկրո վարկ	0,767
5	“d” – երկարաժամկետ ագրո վարկ	0.712

Ֆինանսական ռիսկերի գծով որոշումների կայացման արդյունավետության մեր կողմից առաջարկվող վարկանիշավորումը ունի մի շարք առավելություններ: Նախ, կիրառելիության առումով այն գործնական բարդություններ չի առաջացնում, եթե վարկանիշավորման համար օգտագործվող տեղեկատվությունը արդեն իսկ փոխակերպված է լինում համադրելիության դաշտ՝ ներկայացվելով բալային համակարգով և ընդգրկված լինելով ռիսկերի կառավարչական համակարգում: Բացի այդ, վարկանիշավորումը հստակ ահագանգում է, թե տեղաբաշխված որ ակտիվների ֆինանսական ռիսկերի գծով են իրականացվում համեմատաբար “անարդյունավետ” կամ “թույլ” կառավարչական որոշումներ և դրանով իսկ մարտավարական որոշումներ են կայացվում տեղաբաշխումների կոնկրետ ուղղություններով ռիսկ մենեջմենթի բարելավման ուղղությամբ: Եվ վերջապես, ֆինանսական ռիսկերի գծով որոշումների կայացման արդյունավետության առաջարկվող վարկանիշավորումը ներկայացվում է որպես բաց համակարգ և թույլ է տալիս նրանում ավելացումներ իրականացնելու ոչ միայն տեղաբաշխվող ակտիվների (“a”, “b”, “c”, “d”), այլև կառավարչական գործիքակազմի գծով (X₁, X₂, ...X_n), որի շնորհիվ որոշումների կայացման գործընթացը դառնում առավել ճկուն և հիմնվում է ընդգրկուն տեղեկատվական համակարգի վրա:

**Առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի կառավարման գծով
որոշումների կայացման գործընթացի առաջարկվող համակարգված
մեխանիզմը⁶**



⁶ Կազմված է հեղինակների կողմից:

Այսպիսով, առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման գծով որոշումների կայացման գործընթացը մեր կողմից առաջարկվում է իրականացնել հետևյալ համակարգված մեխանիզմով (տես գծապատկեր 1), որը թույլ կտա համակարգելու ռիսկերի կառավարման գործիքակազմի կիրառման արդյունքները տեղեկատվական միասնական դաշտում և դրանով իսկ բարելավելու ֆինանսական ռիսկերի գծով ընդունվող կառավարչական որոշումների տեղեկատվության ապահովվածությունը առևտրային բանկերում:

Нарек Андреасян- *Проблемы методологии принятий рискованных решений в банках.* -Принятий решений в сфере рисков банковской деятельности имеет свои особенности, что и принуждает теоретиков использовать математический сложных аппарат. В статье предлагается упрощенный метод многофункциональной оценки эффективности риск менеджмента, основанная на использования рейтинговых таблиц, что позволяет анализировать риски банковской деятельности не только по конкретным направлениям кредитования, но и по отдельным центрам возникновения финансовых рисков.

Narek Andreasyan - *Problems of methodology for decision making in banking risk managment.* -Decision-making in the area of banking risk has its own characteristics, which leads theorists to use complex mathematical apparatus. The article proposes the simplified method of assessing the effectiveness of multi-functional risk management, based on the use of rating tables, allowing to analyze the risks of banking activities not only in specific areas of lending, but also for individual responsibility centers of financial risks formation.

BIG DATA IN DIFFERENT SECTORS OF THE ECONOMY: APPLICATION SCENARIOS

HRANT DAVTYAN

The recent developments of Information and Communication Technologies (ICT) sector allow for real-time data collection, which was the reason of current growth in the field of Big Data. The latter is a term used to describe the vast amount of data generated and collected every instant.

In this paper we present different ways of applying big data in different sectors of the economy.

Keywords: big data, management, decision-making, individualization, optimization.

Introduction

The recent developments of Information and Communication Technologies (ICT) sector allow for real-time data collection, which was the reason of current growth in the field of Big Data. The latter is a term used to describe the vast amount of data generated and collected every instant. Big Data gives the opportunity to get insights in various issues related to one's business and enhance the decision-making procedure. For example, there was a study conducted by an American supermarket Wal-Mart, to understand what products experience increase in demand in times of hurricane¹. It is logical to assume that people will be more motivated to buy water, sugar, bread or other types of goods satisfying first needs, as people would expect to stay at home for longer period than usual. By looking to its data the supermarket confirmed this natural assumption by experiencing higher sales for emergency supplies. A more interesting (and surprising) insight found by Wal-Mart analysts stated that before the hurricane the strawberry Pop-tarts (packaged small waffles with strawberry flavor) experienced tremendous increase in sales summing up to 700% of the demand in previous time period. The latter was, of course, not expected result. Using this statistics, Wal-Mart management ordered to replace strawberry Pop-tarts and advertise them on the checkout to increase the sales even more.

This example shows the beauty of Data Driven Decision-making: one may not finally understand where the causality is coming from, however, only its existence is enough to enhance the decision-making performance. In this paper we present alternative ways of applying data for increased business performance. Tourism sector, education, sales and transport cases are separately discussed below.

Tourism sector management

¹ Viktor Mayer Schönberger, Kenneth Cukier, "Big Data: A Revolution That Will Transform How We Live, Work, and Think", Houghton Mifflin Harcourt, 2013

Tourism sector companies offer different tours to various places in and out of the country. In case of international tourism there is a vast amount of data showing the number of tourists crossing the border for a given period of time. However, if we concentrate on inbound tourism, it is very hard to learn the average number of people visiting, for example, the Garni temple near Yerevan, Armenia every year and the frequency of their visits during the year. Many of the tourism companies in Armenia advertise and offer tours to Garni as it is considered a popular attraction for tourists. What if those companies had data on number of people visiting different sights and attractions during a period of time? They could have a better business strategy of offering more tours for more visited places. Fortunately, this data exists. Companies in mobile telecommunication industry collect GPS geolocation data from their sim card users every second. Whether you are at home or at your workplace, as far as you have your mobile phone with you, your location data can be collected. In case of getting access to this database, tourism sector companies can draw a heatmap of most visited places in Armenia by generating the number of mobile sim card users in every location. Even more, they can learn at which location people stay for longer or for shorter period of time and based on this optimize their multiple location tour offer packages.

Supermarket sales

Supermarkets sell millions of products to millions of customers per day, and each of the buyers has his/her own preferences. Nowadays, especially in developed countries, the competition between different supermarkets is not only about the price, but the quality of service that they provide to each customer. To gain comparative advantage, to provide the best individualized offers to their clients, supermarkets need to use the insights that they can get from Big Data. Many of the supermarkets in developed countries and in Armenia as well, have the so-called loyalty program, which gives credits to its frequent buyers when a loyalty (bonus) card is presented. The reason of introducing this kind of system is to motivate your one-time customers to become a loyal client. However, these programs are even more valuable. Using only the customer purchase data, which is automatically collected once the loyalty (bonus) card is checked-in, the supermarkets can get insights on the top products bought by this or that customer. When this information is available, the supermarket marketing team, in the period of discounts, can send not a generalized flyers to all their customers, but personalized adverts including special information (e.g. price discounts) on the most bought items by that specific customer, which will be more interesting for him/her and motivate buying.

Curriculum individualization

In education management one of the most debating problems is the individualization of curriculum. On the one hand, the instructor has to offer a course, which meets the industry and academy demand. On the other hand, the curriculum must be individualized to meet the needs of students most, as students learn better if the material meets their own individual preferences. For an instructor alone it is not naturally possible to learn all the preference of all of his/her student and provide

lectures, which meet their interests. Yet, it is possible to solve the individualization problem by using Big Data. 25% of all Facebook users in the world are 16-24 year old individuals, which matches with school graduation and university studies age². This statistics helps us to infer that most probably a random picked student will be an active Facebook user, which means that it is possible to get data on his/her Facebook likes. The latter will present student's preferences over variety of topics. These data can be aggregated and grouped into several topics, which can be instructed during the teaching process. As a result, students will learn the material that is meeting both the industry demand and their preferences as well, which will combine learning with enjoyment and increase the studying productivity.

Transport optimization

The on-ground public transport in Yerevan, Armenia consists of 3 main types: buses, minibuses and trolley buses. Trolley buses are very few so they can be left out of the consideration. Yet, the large number of minibuses and buses (and the fact that they are not owned by the state or one single company) makes them compete and create jams near the stops, as well as decrease safety on roads. Nowadays, bus and minibus drivers strive to optimize the traffic themselves by slowing down or by increasing their speed whenever they think that their "competitor" is close.

The Ministry of Transport, Communication and Information Technologies of the Republic of Armenia³ owns a large dataset on minibus as well as bus locations in Yerevan collected every second. Using this data, government can suggest an optimal route and optimal traffic schedule for every bus and minibus, which will allow to:

1. Decrease the amount of traffic jams,
2. Optimize the bus stop locations and meet population needs,
3. Increase safety on roads,
4. Generate more profit from public transport.

Conclusions

This paper discussed application of Big Data in making business decisions in various sectors. More precisely, tourism and education sectors, supermarket sales as well as public transportation were discussed. Overall, we can conclude that Big Data has variety of applications and it is in the manager's interest to learn about them. Applying the insights received from analytics can not only withhold from potential losses, but also increase productivity, quality of goods and services and provide higher returns.

References

- [1] Viktor Mayer-Schönberger, Kenneth Cukier, "Big Data: A Revolution That Will Transform How We Live, Work, and Think", Houghton Mifflin Harcourt, 2013
- [2] Distribution of active Facebook users worldwide by age - <https://www.statista.com/statistics/376128/facebook-global-user-age-distribution/>

² <https://www.statista.com/statistics/376128/facebook-global-user-age-distribution/>

³ www.mtc.am

[3] Ministry of Transport, Communication and Information Technologies of The Republic of Armenia – www.mtc.am

Грант Давтян- Последние разработки сектора информационно-коммуникационные технологии (ИКТ) позволяют сбора данных в режиме реального времени, что стало причиной нынешнего роста в области больших данных. Последнее представляет собой термин, используемый для описания огромного количества данных, полученных и собранных в каждый момент.

В этой статье мы представляем различные способы применения больших данных в различных отраслях экономики.

Հրանտ Դավթյան- Տեղեկատվության և Հաղորդակցման Տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի վերջին տարիների զարգացումները թույլ են տալիս տվյալների հավաքագրումն իրականացնել իրական ժամանակում, ինչը պատճառ է հանդիսանում Մեծ տվյալների ոլորտի ընթացիկ աճի: Վերջինս տերմին է, որն օգտագործվում է անընդհատորեն առաջացող և հավաքագրվող հսկայական քանակությամբ տվյալների նկարագրության համար:

Սույն հոդվածում ներկայացվում են տնտեսության տարբեր ոլորտներում Մեծ տվյալների կիրառության տարբերակներ:

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ

ՍՈՑՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Թեմայի ուսումնասիրության արդիականությունը թելադրված է Հայաստանի Հանրապետությունում հետխորհրդային հասարակական տրանսֆորմացիայի իրականությամբ և հակասություններով: Այն որոշվում է նոր քաղաքական համակարգի կայուն զարգացման և այդպիսի իրավիճակի հասնելու ու ամրապնդելու կատարելագործման եղանակների պահանջով: ՀՀ-ում հասարակական արմատական փոփոխությունները, անցումային բնույթը և քաղաքական համակարգի որոշակի անկայունությունը պայմանավորում են նախկին հասարակարգի մոդեռնիզացման մեխանիզմների ու եղանակների քաղաքագիտական վերաթևոթման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. Հայաստանի Հանրապետություն, քաղաքական կայունություն, կոնֆլիկտ, իշխանություն, ընդդիմություն, կուսակցություններ, ընտրություններ, ժողովրդավարություն

Թեմայի ուսումնասիրությունը պահանջում է հետազոտության գործոնների որոշակիացում, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմել ՀՀ քաղաքական համակարգին ու հասարակությանը բնորոշող քաղաքական կայունության ձևավորման մասին: Անհրաժեշտ է մշակել այնպիսի հետազոտական մոտեցում, որը կկողմնորոշվի կայունության գործոնների ուսումնասիրմանը՝ ՀՀ աշխարհաքաղաքական, ներքաղաքական, միջկուսակցական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ առանձնահատկություններն հաշվի առնելով:

Վերջին տարիներին «կայունություն» եզրույթն արդիական է դարձել ընդհանուր քաղաքական համապատկերում: Այն օգտագործվում է քաղաքագետների, պատմաբանների, տնտեսագետների, սոցիոլոգների, հոգեբանների, լրագրողների և այլոց կողմից: Այդ առումով պետք է փաստել, որ «կայունություն» եզրույթի ընկալման հստակություն կամ միակերպություն չկա: Որպես դրա հոմանիշներ օգտագործվում են նաև «ուժային հավասարակշռություն», «անվտանգություն»¹, «կարգ ու կանոն»² և այլ եզրույթներ: Այսուհանդերձ, ընդհանուր առմամբ, եզրույթն արտացոլում է պետության, հասարակության, սոցիալ-քաղաքական խմբերի և անհատի վիճակի համակողմանի բարեհաջող լինելը:

Առավել կարևորում ենք «կայունություն» եզրույթի (stabilité) ընդհանուր քաղաքական իմաստը, ինչն ունի բավականին լայն բովանդակություն և կիրառվում է տարբեր ձևակերպումներով և իմաստային ենթատեքստերով: Ինչպես օրինակ՝ «քաղաքական կայունություն», «քաղաքական համակարգի կայունու-

¹ Семигин Г. Ю., Политическая стабильность и безопасность . «Социально-политический журнал», 1996, № 3, сс. 14-24.

² Виноградов В. Д., «Стабильность конфликтность и политический порядок.- //Политические процессы в России в сравнительном измерении.- СПб., 1997, сс. 20-32.

յուն», «կայուն քաղաքական իշխանություն», «կայուն վարչակարգ», «կայուն քաղաքականություն», «կայուն կառավարություն», «կայուն սոցիալ-տնտեսական զարգացում» և այլն:

Քաղաքական կայունության հիմնախնդրի վերլուծության փորձեր կատարվել են արևմտյան քաղաքագիտական գրականության մեջ, օրինակ՝ Դ. Իսթոնի³, Ք. Ուոլցի⁴, Լ. Ռիչարդսոնի⁵ կողմից: Ա. Լեյպհարտը հստակ ներկայացնում է դրա բաղկացուցիչները. «Քաղաքական կայունությունը մեջ պարունակում համեմատական քաղաքագիտության մեջ օգտագործվող հետևյալ հասկացությունները՝ համակարգի պահպանում, քաղաքացիական կարգ ու կանոն, լեգիտիմություն ու արդյունավետություն»⁶:

ՌԴ-ում թեման ուսումնասիրվել է մի շարք հետազոտողների կողմից: Ի. Եգորովան կայունությունը բնորոշում է որպես քաղաքական համակարգի հաստատուն զարգացման, փոփոխությունների արձագանքման և առանց պայթյունի, փլուզման ինքնափոփոխման ընդունակության որակական վիճակ⁷: Ա. Գալկինը կայունությունը դիտարկում է որպես սոցիալ-քաղաքական համակարգի օբյեկտիվ հիմնարար բնութագրում, որ կան բարձր աստիճանի կայուն համակարգեր, սակայն համակարգի բացարձակ կայունություն հնարավոր չէ⁸:

Դ. Ջերկինի կարծիքով քաղաքական կայունությունը համակարգի վիճակ է, երբ սուբյեկտների գործողություններում ցանկացած շեղում սրբագրվում է հաստատված, լեգիտիմացված նորմերի իրականացմամբ, և բնութագրվում է սոցիալական սուբյեկտների ծագող պահանջներով և շահերով ու արտաբերվում համակարգի հետ⁹:

Ըստ Ա. Դեգոյարովի՝ կայունությունն արտահայտում է «քաղաքական դինամիկայի այնպիսի իրավիճակ, որի դեպքում ձեռք է բերվում հիմնական քաղաքական ակտորների ուժերի ժամանակավոր հավասարակշռություն, որից հետո հնարավոր է հետագա անկայունություն և տվյալ հավասարակշռության խախտում»¹⁰:

Իսկ արդեն ընդհանրական քաղաքագիտական բառարանում տրվում է հետևյալ ձևակերպումը. «Քաղաքական կայունությունը քաղաքական սուբյեկտների միջև կապերի համակարգ է, որին բնորոշ են որոշակի ամբողջականություն և իր գործառույթների արդյունավետ իրականացում»¹¹:

ՀՀ-ում միայն վերջին տարիներին նկատելի է այս հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրությունը, որը դեռևս առանձին կամ հատուկ քաղաքագիտական ուսումնասիրության առարկա չի դարձել¹²:

³ Տե՛ս **Easton D.**, *The Political System.*- New York, 1953; *Framework for Political Analysis.*- New York, 1965.

⁴ Տե՛ս **Kenneth N. Waltz.**, *Theory of International Politics.*- Reading, MA, 1979.

⁵ Տե՛ս **Richardson L. F.**, *Arms and Insecurity.*- Chicago, IL, 1960.

⁶ **Лейпхарт А.**, Демократия в многосоставных обществах, М., 1997, сс. 38-39.

⁷ **Егорова И.**, Политическая стабильность. - «Бизнес и политика», М., 1996, № 5, сс. 49-50.

⁸ **Галкин А. А.**, Общественная стабильность: некоторые теоретические подходы. - «Мировая экономика и международные отношения», 1990, № 9, сс. 55-67. **Галкин А. А.**, *Стабильность и изменения сквозь призму культуры мира*, «Политические исследования», 1998, № 5, сс. 114-122.

⁹ **Зеркин Д. П.**, *Основы политологии.* Курс лекций для студентов вузов.- Ростов на Дону, 1996, с. 274.

¹⁰ **Дегтярев А. А.**, *Основы политической теории.* Учебное пособие.- М., 1998, с. 199.

¹¹ *Политология.* Энциклопедический словарь, М., 1993, с. 281.

¹² Օրինակ տե՛ս **Բայան Բ. Ս.**, *Քաղաքական կայունության հարցի շուրջ*, ԲԵՆ, 2004, № 1, էջ 3-6: *Քաղաքագիտություն.* Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Ե., 2006:

Քաղաքական կայունության գործոններում կարևոր դերակատարություն ունեն ժողովրդավարական կայունության, քաղաքացիական հասարակության¹³ և իրավական պետության կայացման հարցերը: Բազմակուսակցական համակարգի ձևավորմանն ու կայացմանն¹⁴ զուգընթաց քաղաքական կայունության տեսանկյունից պետք է կարևորել քաղաքական ընտրանու¹⁵ (էլիտա), քաղաքական կուսակցությունների և նրանց առաջնորդների, ընդդիմության, հասարակական կազմակերպությունների, ընտրական գործընթացների¹⁶, ՋԼՄ-ների դերակատարության¹⁷ գործոնները:

Գիտական մեթոդաբանության, վերջին տարիների քաղաքական պրակտիկայի փորձի վերաբժեքավորման հիման վրա անհրաժեշտ է բացահայտել նորանկախ ՀՀ-ում քաղաքական կայունության հիմքերը, դրա հաստատման ուղիները:

Այդ ամենից ելնելով նպատակահարմար է առաջադրել հետազոտական հետևյալ խնդիրները.

1. հիմնախնդրի տեսա-մեթոդաբանական հիմքերի հստակեցում,
2. հասարակական զարգացման նպատակների և մեթոդների ու ՀՀ քաղաքական իրականության նկատմամբ կիրառման եղանակների վերաբերյալ ազդեցիկ քաղաքական ուժերի հիմնական դիրքորոշումների պարզաբանում,
3. ՀՀ-ում անցումային շրջանում քաղաքական կայունության առանձնահատուկ գծերի բացահայտում,
4. ՀՀ-ում քաղաքական կայունության բազմաբնույթ գործոնների և պայմանների ուսումնասիրում. ա) հասարակության կայունության վրա ազդող քաղաքական գործընթացների զարգացման վրա տիրող միտումների վերլուծում, բ) քաղաքական կայունության գործընթացում կուսակցա-հասարակական քաղաքականության դերակատարության հետազոտում:

Փաստորեն, հետազոտության օբյեկտը ՀՀ քաղաքական համակարգի որակական իրավիճակն է, նրա քաղաքական կայունության աստիճանը: Հետազոտության առարկան ՀՀ և հայաստանյան հասարակության քաղաքական կայունության կայացմանը նպաստող գործոնների ամբողջությունն է:

Հիմնախնդրի հետազոտման նպատակը, խնդիրները և առարկան կանխորոշել են ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը՝ որպես ընդհանուր տեսական և հատուկ քաղաքագիտական մեթոդների համադրություն, ինչը թույլ է տալիս ստանալ հավաստի տեսական գիտելիք: Այս առումով, հիմնախնդրի հետազոտման ընթացքում անհրաժեշտ է օգտագործել համակարգային, համեմատական և դիալեկտիկական մեթոդներ:

¹³ **Քեզլարյան Ա. Մ.**, Քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացը Հայաստանում, ԼՀԳ, 2013, № 1, էջ 123-130:

¹⁴ **Քեռյան Գ. Մ.**, Բազմակուսակցության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում 1990-2000թթ., ԲԵՀ, 2001, № 2, էջ 52-62:

¹⁵ Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական ընտրանին և ժողովրդավարության անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2006:

¹⁶ Տե՛ս **Մաթևոսյան Վ. Ա.**, Ընտրությունների դերը Հայաստանում բազմակուսակցականության կայացման գործընթացում, ԼՀԳ, 2010, № 3, էջ 91-102:

¹⁷ **Դավթյան Ա.**, Քաղաքական մարտահրավերները և զանգվածային լրատվամիջոցները Հայաստանի Հանրապետությունում, ԲԵՀ. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2015, № 6, էջ 74-82:

Պետք է կարևորել հասարակության քաղաքական կայունության կայացման ուղիների փնտրտուքի համակարգային մոտեցումը, ՀՀ-ում քաղաքական կայունության հնարավոր ձեռքբերման յուրահատկության որոշումը, վերլուծել և համակարգել ՀՀ քաղաքական կայունությանը նպաստող գործոնները և պայմանները, բացահայտել քաղաքական կոնֆլիկտի և քաղաքական կայունության փոխըացնող տեղն ու դերը:

Հիմնախնդրի բազմակողմանի տեսա-մեթոդական ուսումնասիրությունը կնպաստի ՀՀ ազգային-պետական շահերին համապատասխանող հայեցակարգերի մշակմանը, անցումային ժամանակահատվածի հիմնախնդիրների լուծմանը¹⁸, քաղաքագիտական և սոցիոլոգիական դիսցիպլինների դասավանդմանը, իշխանության մարմինների և կուսակցությունների ծրագրային փաստաթղթերի մշակմանը:

Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կտան առանձնացնել կարևոր հետևություններն ու եզրակացությունները, ինչպես նաև՝ առաջադրել հետագա հետազոտման կարիք ունեցող հարցերը:

Յուրահատուկ բնութագրիչներով օժտված քաղաքական կայունության հաստատման հիմնախնդրի միջգիտակարգային լինելը պահանջում է համալիր մոտեցում և պայմանավորում է տարբեր գիտակարգերի դիմում՝ քաղաքագիտություն, սոցիոլոգիա, պատմություն, տնտեսագիտություն, հոգեբանություն: Այսինքն, միայն առանձին մոտեցումների ցուցաբերմամբ անհնար է բացահայտել քաղաքական կայունության ֆենոմենին բնորոշ բոլոր հատկանիշները:

1990-ական թվականների սկզբից նորանկախ ՀՀ-ի և հայաստանյան հասարակության զարգացումն ուղեկցվում էր անհավասարակշռությամբ և վայրիվերումներով, անցումային շրջանի արդյունք հանդիսացող «դինամիկ քաոսի» բնորոշ իրավիճակով¹⁹: Սակայն, հայաստանյան հասարակության այսպես կոչված քաղաքական «անավարտությունը» նրա հետագա զարգացման համար խոչընդոտ չէ:

Այսպես, ՀՀ կարճ ժամանակահատվածում վճռականորեն հրաժեշտ տվեց խորհրդային նախկին անցյալին, և հասկանալի է, որ այդ գործընթացի զարգացումը հավասարաբաշխ չէր կարող լինել: Օրինակ, ձևափոխությունները հանգեցրեցին նշանակալից տնտեսական և սոցիալական հետևանքների, տարատեսակ ցնցումների, նաև՝ քաղաքական անկայունության, ինչը հարկադրեց լուծել մի շարք հրատապ խնդիրներ, որոնք կհանգեցնեին ՀՀ քաղաքական համակարգի կայունացմանը:

Անհրաժեշտ է դիտարկել նաև ՀՀ-ում քաղաքական կայունության սերտ կապը քաղաքացիական հասարակության հետ²⁰, որի ձևավորումը համընկավ ՀՀ քաղաքական համակարգի տրանսֆորմացիայի ժամանակահատվածի հետ:

¹⁸ **Մարգարյան Հ. Լ., Զայիսցյան Հ. Գ.**, Անցումային գործընթացները Հայաստանում, ԲԵՀ, 2005, № 3, էջ 126-134:

¹⁹ **Պողոսյան Է., Միմոնյան Լ.**, Ժողովրդավարական վերափոխումների ընթացքը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում (1990-2001թթ.), ԲԵՀ. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2012, № 6, էջ 60-73:

²⁰ **Ալեքսանյան Ս. Մ.**, Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերության հարցի շուրջ, ԲԵՀ, 1997, № 2, էջ 140-147:

Անցյալ ժամանակահատվածում քաղաքակիրթ իրավական մեթոդներով քաղաքական կայունության փաստացի և որոշակի ձեռքբերումը հիմնականում (բացառյալ՝ օտարի հրահրմամբ և կազմակերպմամբ մի քանի դեպքերի) վկայում է ծագած խնդիրները կոնֆլիկտի²¹ փուլի չհասցնելով լուծելու իշխանությունների պատրաստակամության և կարողունակության մասին: Մինչդեռ կոնֆլիկտը միանշանակ քայքայիչ դեր չի խաղում, այլ նաև կարող է կառուցողական գործառույթ իրականացնել և քաղաքական կայունության վրա դրական ազդեցություն թողնել: Մանավանդ, երբ նկատի ենք առնում այն հանգամանքը, որ ՀՀ-ում բացահայտ կոնֆլիկտը և քաղաքական պայքարը միջկուսակցական և հասարակական կյանքի նորմա են դարձել: Այս տեսանկյունից, քաղաքական կայունության համապատկերում կոնֆլիկտը և նրա կարգավորումը պետք է դիտարկել նաև որպես հասարակության ժողովրդավարացման անհրաժեշտ նախապայման:

Քաղաքական կայունության ապահովագրման տեսանկյունից դրական գործոն է նաև ՀՀ վարչական բաժանման ուղղաձիգությունը և խիստ կենտրոնացվածությունը, ինչը բացառում է կառավարման իշխանության բարձրագույն ու տեղական մարմինների միջև որևէ կոնֆլիկտի առաջացման հնարավորությունը:

Հասարակության ժողովրդավարացումը, որ ներառում է հանրության հանդեպ իշխանության պատասխանատվության կոռեկցիան, կանոնավոր և արդար ընտրությունները, ազատ կարծիք արտահայտելու քաղաքացիների իրավունքը, մամուլի ազատությունը, քաղաքական բազմակարծությունը, քաղաքականության ինստիտուցիոնալացումն էապես կնպաստեն քաղաքական կայունության ձևավորմանը և գործառույթացմանը²²:

ՀՀ-ում կայունության համապատկերում կարևոր դեր է խաղում ընտրական քաղաքականության ու գործընթացների գործոնը²³: Ընտրությունները դարձվում են իշխող քաղաքական ուժերի իշխանության պահպանման և վերարտադրման գործիք: Մինչդեռ, ժողովրդավարական գործիքներով չամրապնդված ընտրական ժողովրդավարությունը քաղաքական ճգնաժամերի պայմաններում կարող է դառնալ ոչ միայն հակահամակարգային, այլև ապակայունացնող ու կոնֆլիկտածին գործոն:

Քաղաքացիական ազատությունների ոլորտում, մասնավորապես՝ կարծիքի ազատ արտահայտման քաղաքացու իրավունքի, ՀՀ-ում ընդհանուր առմամբ կայունություն է տիրում, սակայն հասարակական կարծիքն իշխանական համակարգի համար առաջնահերթություն չէ, իսկ հասարակության ստացած հրապարակայնությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա թույլ է ազդում:

ՀՀ քաղաքական կայունության համապատկերում հատուկ տեղ է զբաղեցնում մամուլի ազատության գործոնը: Ընդհանուր առմամբ առկա խոսքի ազատության և կարծիքի արտահայտման գրեթե անսահմանափակ լինելուն՝ ՁԼՄ-ները՝ հատկապես Էլեկտրոնային, հայտնվեցին ինչպես պետական, այնպես էլ կու-

²¹ Մանրամասն տե՛ս **Ենգոյան Ս. Փ.**, Քաղաքական կոնֆլիկտներ, Ե., 2003:

²² **Маркаров А.**, Институциональная трансформация в Армении в 1990-2010гг., ԲԵՀ. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2011, № 6, էջ 35-47:

²³ **Маркаров А. А.**, Электоральные системы. Институционализация и функции парламента, ԼՀԳ, 1998, № 1, էջ 58-67:

սակցական, անհատական, խմբակային շահերից կախման մեջ: Հասկանալիորեն, այդպիսիք պետք է արտահայտեն իրենց պատվիրատուների տեսակետները, ինչը քաղաքացիների շրջանում առաջացնում է անվստահություն, և կարող է խեղաթյուրել ինչպես ժողովրդավարական ազատությունները, այնպես էլ՝ վտանգել քաղաքական կայունության ամրապնդումը, հաճախակի դառնալով տարաբնույթ կոնֆլիկտների առաջացման պատճառ: Մանավանդ, երբ կոնֆլիկտաձագման գործընթացներում իրենց որոշակի դերակատարությունն են ունենում արտասահմանյան, օտար կառույցները:

Քաղաքական բազմակարծության առումով չնայած տասնյակ քաղաքական կուսակցությունների և հարյուրավոր հասարակական կազմակերպությունների առկայությանը և գործունեությանը, քաղաքական ծրագրերի ու հայեցակարգերի բազմազանությանը, այդուհանդերձ ժողովրդական լայն զանգվածների շահերը և տրամադրությունները նրանց կողմից միշտ չէ, որ աղեկվատ կերպով են արտահայտվում: Այս տեսանկյունից, հաշվի առնելով ՀՀ արտաքին մարտահրավերներն ու ներքին սպառնալիքները՝ առավել նպատակահարմար կլինի, որպեսզի քաղաքական համակարգում հիմնական ու հաստատուն գործնական դերակատարություն ունենան 2-3 կուսակցություն կամ դաշինք, որոնք ի գործու կլինեն իրապես բնակչության առնվազն գերակշիռ մասի ու պետության իրական շահերը ներկայացնեն և նպաստեն քաղաքական համակարգի կայունացմանը ու կոնֆլիկտների կանխարգելմանը:

Քաղաքական կայունության համապատկերում ներկա ժողովրդավարական պայմաններում հատուկ տեղ է զբաղեցնում ընդդիմության ինստիտուտը: ՀՀ-ում ընդդիմությունը՝ կուսակցությունների, կազմակերպությունների և անհատների տեսքով, ունի լեգալ, ազատ ինքնադրսևորման ու հասարակական-քաղաքական կյանքում տարաբնույթ և ակտիվ գործունեության իրական հնարավորություններ: Սակայն, անցած տարիների ընթացքում, չնայած խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմության բոլոր ջանքերին՝ ՀՀ-ում այդպես էլ չձևավորվեց այն քաղաքական կարողունակ ուժը, որը փաստացիորեն ի վիճակի կլիներ դիմակայել և կառուցողական դիրքորոշմամբ արդյունավետ ընդդիմանալ իշխող քաղաքական ուժերին: Մինչդեռ, ներուժով և բնակչության աջակցության մակարդակով պայմանավորված իշխող և ընդդիմադիր քաղաքական ուժերի միջև հավասարակշռության հարաբերակցությունից է մեծապես կախված ՀՀ ու հայաստանյան հասարակության արդյունավետ գործունեությունը և կայուն քաղաքական զարգացումը:

Այսպիսով, ՀՀ քաղաքական կայունության հիմնախնդիրն ինքնին բազմակողմանի թեմա է ինչպես տեսա-ճանաչողական, այնպես էլ՝ գործնական-կիրառական առումներով: Ավելին, այն առաջնահերթ հարկավոր է կարևորել նաև ՀՀ-ում ժողովրդավարացման գործընթացների հետագա ընդլայնման ու զարգացման համապատկերում²⁴:

²⁴ Մանրամասն տե՛ս *Մարգարյան Մ.*, Ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «21-րդ դար», 2005, № 4, էջ 124-149: *Մարգարյան Մ., Մովսեսյան Հ.*, Ժողովրդավարական լեգիտիմության հաստատման առանձնահատկությունները ՀՀ-ում, «21-րդ դար», 2013, № 1, էջ 118-142:

Ինչ խոսք, մեր հետազոտական ներկա փորձն ամեննին չի հավակնում ՀՀ քաղաքական կայունության ամբողջական և սպառիչ վերլուծության պատկերը տալ: Հասկանալիորեն, մեկ հոդվածի շրջանակում հնարավոր չէր լուսաբանել և վերլուծել քաղաքական կայունության ձևավորման, գործառույթների և հաստատման ուղիների և զարգացման բոլոր ասպեկտները:

Софья Григорян - О теоретико-методологических вопросах политической стабильности в Республике Армения. - Актуальность исследования темы продиктованы реалиями и противоречиями постсоветской общественной трансформации Республики Армения. Это требует конкретизацию факторов исследования, что даст возможность иметь представление о формировании политической стабильности характерной политической системы РА и общества.

Проблема политической стабильности РА сама собой всесторонняя тема как теоретико-познавательной, так и практически-прикладной аспектах.

Sofia Grigoryan - Theoretical-methodological issue on political stability in the Republic of Armenia. - The actuality of the research topic was dictated by the realities and contradictions of social transformation in post-Soviet Armenia. It requires the definition of the study of the factors that will enable to have an idea on the formation of political stability characteristics of the political system and society in RA.

The problem of political stability, itself, is a comprehensive subject in audio-cognitive as well as practical aspects in the Republic of Armenia.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Անցյալի հիմքի եվ նրանից կազմվող ձևերի ուսուցումը գրաբարում 5

ՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Լեզվական կարողությունների գնահատումը օտար լեզվի դասավանդման
ընթացքում 11

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գրաբարի ցուցական դերանունների ուսուցումը 17

ՆԱԻՐԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Դարձվածքների ծագման և զարգացման առանձնահատկությունները
ֆրանսերենում 30

SEDA EVINYAN

Communication 35

ASTGHIK SIMONYAN

Dreamreader.net as a useful tool in teaching grammar, vocabulary, and
speaking skills through listening in an efl classroom: a case study..... 39

JEMMA MILITONYAN

The role of a teacher in flt classroom 44

AIDA MARDANIAN, ANAHIT HOVHANNISSIAN

Quelques problèmes de l'enseignement de l'orthographe du Français 49

ANAHIT HOVHANNISSIAN

Étude comparative de quelques problèmes de structure syntaxique des
proverbes français et italien 54

СВЕТЛАНА ЕГИАЗАРЯН

Изучение текстов по специальности как начальный этап
лингвистического образования студентов не-русистов 61

ЛИАНА АРУТЮНЯН

Педагогические особенности влияния методов семейного воспитания
на развитие детей 66

АНЖЕЛА АЙДИНЯН

Помним и требуем (Геноцид армян в русской художественной литературе)
(литературно-музыкальная композиция) 75

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՆՈՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համալսարանի շրջնավարտի մրցակցային ունակությունները 81

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒԴՅԱՆ, ՆՈՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ասպիրանտի մասնագիտական ունակությունների
գնահատման մեթոդաբանությունը 85

ԱՏՈՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը
հետբուհական կրթական համակարգում 92

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԱՆՅԱՆ, ՎԱՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բուհերի ֆինանսական միզոցների կառավարման արդյունավետության
գնահատման մեթոդաբանության շուրջ 97

ՎԱՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ֆինանսական կայունության կառավարման հիմնախնդիրները
ՀՀ բուհերում 105

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱԼԱԹՅԱՆ

Բնապահպանական աուդիտի մեթոդաբանական
հիմնախնդիրները 110

ՆԱՐԵԿ ԱՆԴԵԱՍՅԱՆ

Ռիսկային որոշումների կայացման մեթոդաբանության
հիմնախնդիրները բանկերում 115

HRANT DAVTYAN

Big data in different sectors of the economy: application scenarios 122

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՖՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կայունության
տեսա-մեթոդաբանական հարցերի շուրջ 126

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, և բանալի - բառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
 - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Բնական գիտությունների ֆակուլտետի մասնաշենք՝ Մելինե Մելիքյանին, կամ
 - ուղարկել akunq.ysuib@gmail.com և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

Ա Կ Ո Ւ Ն Ք

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(14)

A K U N Q

A COLLECTION OF EDUCATIONAL – METHODOLOGICAL
ARTICLES

NUMBER 2(14)

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Մ.Կ. ՄԵԼԻՔՅԱՆԻ

Number-responsible – A.A. NERSISYAN

Combuter designer - M.K. MELIKYAN

Չափսը՝ $70 \times 100^{1/16}$: Տպ. մամուլը՝ 8.5:
Տպաքանակ՝ 100:

Size- $70 \times 100^{1/16}$. Press- 8,5.
Edition- 100.

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1:

YSU publishing-house

c. Yerevan, 0025, Al. Manukyan 1.

